

Երևանի բնակիչների շրջանում թափոնների տեսակավորման
վարքագծի ուսումնասիրում և աջակցություն հանրային իրազեկման
ծրագրի մշակմանը

Հետազոտողներ՝ Միրանուշ Հարությունյան և Տաթև Հարոյան
Հետազոտության օգնականներ՝ Մանե Մխիթարյան և Մերի Արսենյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ	3
Ներածություն	4
Հետազոտության համատեքստ. թափոնների տեսակավորման ուղղությամբ իրականացված ծրագրեր, նախաձեռնություններ և գործող կազմակերպություններ	5
Մեթոդաբանություն	9
Գրականության ուսումնասիրում.....	9
Հարցում բնակիչների շրջանում.....	9
Հարցազրույցներ ոլորտի փորձագետների հետ.....	10
Գրականության ուսումնասիրում.....	11
Ի՞նչ են կոշտ կենցաղային թափոնները.....	11
Հետխորհրդային երկրներ	11
ԿԿԹ-ի սահմանում.....	11
Թափոնների տեսակավորումը սկզբնաղբյուրում	12
Թափոնների տեսակավորման վարքագծի վրա ազդող գործոններ	13
Տվյալների վերլուծություն	15
Հարցման արդյունքներ	15
Երկչափ վերլուծություններ	22
Մետատվյալներ	26
Հարցազրույցներ	28
Հիմնական եզրակացություններ	31
Թափոնների տեսակավորման գործելակերպերը, տեսակավորման վրա ազդող հիմնական գործոնները, մոտիվացիոն գործոնները և խոչընդոտները	31
Տեսակավորման վերաբերյալ իրազեկվելու աղբյուրներ և եղանակներ.....	33
Վերջաբան և հիմնական շեշտադրումներ.....	35
Հավելված 1: Հարցաշար. բնակիչների շրջանում թափոնների տեսակավորման վարքագծի ուսումնասիրում և աջակցում հանրային իրազեկման արշավի մշակմանը	38
Հավելված 2: Թափոնամանների քարտեզ	48
Գրականություն.....	49
Աբստրակտ.....	52
Abstract	52

Հապավումներ

ԵՄ	Եվրոպական միություն
ԿԿԹ	Կոշտ կենցաղային թափոն
ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակական կազմակերպություն

Ներածություն

Հետազոտությունը վերաբերում է Հայաստանում առկա խնդիրներից մեկին՝ կոշտ կենցաղային թափոնների (այսուհետ՝ ԿԿԹ) հավաքին ու տեսակավորմանը, ինչը թափոնների արդյունավետ վերամշակման հիմնարար նախադրյալներից է:

2020 թվականի դեկտեմբերից քաղաքային նոր պիլոտային ծրագրով Երևանի վարչական շրջաններում սկսել են տեղադրվել թափոնների տեսակավորման համար նախատեսված թափոնամաններ: Ծրագիրը նպատակ ունի բարելավել քաղաքի ԿԿԹ կառավարման հարցը և ներմուծել վերամշակման մշակույթ:

Մի շարք ՔՀԿ-ներ և հետազոտական կենտրոններ իրենց աշխատանքներով աջակցում են երկրում ԿԿԹ կառավարման ջանքերին՝ տեսակավորված հավաքների կազմակերպման միջոցով, հասարակության շրջանում վերամշակման մշակույթի մասին իրազեկման արշավներ անցկացնելով, թափոնների կառավարման լուծումներ առաջարկելով և այլ հարակից թեմաներով ուսումնասիրություններ անելով:

Այս ուսումնասիրության նպատակն է աջակցել շահառու ՔՀԿ-ներին թափոնների կառավարմանը վերաբերող ընթացիկ և ապագա ծրագրերում և գործողություններում, նպաստել իրազեկված և գիտելիքահեն որոշումների կայացմանը՝

- 1) թափոնների տեսակավորման վարքագծի վրա ազդող հիմնական գործոնների վերհանման միջոցով,
- 2) քաղաքացիների՝ թափոնների տեսակավորման հիմնական դրդապատճառների/մոտիվացիոն գործոնների դուրս բերման միջոցով,
- 3) շահառու ՔՀԿ-ներին հանրային իրազեկման արշավների նախագծմանը և իրականացմանն աջակցող տեղեկատվություն տրամադրելով:

Հետազոտությունը կենտրոնացած է ստորև նշված երկու խնդիրների շուրջ.

Խնդիր 1. Վերհանել բնակիչների՝ թափոնների տեսակավորման գործելակերպերը և վարքագիծը (Երևանի բոլոր վարչական շրջաններում, որտեղ տեղադրված են տեսակավորման թափոնամաններ), հիմնական պատճառները/գործոնները, որոնք, ըստ բնակիչների, խոչընդոտում են թափոնների տեսակավորմանը, ինչպես նաև հասկանալ այն հիմնական գործոնները, որոնք դրական կամ բացասական կերպով ազդում են մարդկանց՝ թափոնների տեսակավորման վարքագծի վրա և տեսակավորում իրականացնողների մոտիվացիոն գործոնները:

Խնդիր 2. Հասկանալ թափոնների տեսակավորման վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության մակարդակը և բացահայտել հաղորդակցման այն նախընտրելի աղբյուրներն ու եղանակները, որոնցով վերջիններս ցանկանում են տեղեկացված լինել և ստանալ գիտելիքներ թափոնների ճիշտ տեսակավորման մասին:

Հետազոտության համատեքստ. թափոնների տեսակավորման ուղղությամբ իրականացված ծրագրեր, նախաձեռնություններ և գործող կազմակերպություններ

Թափոնների կառավարումը Հայաստանում այն հանրային ծառայություններից է, որում համապատասխան գործառույթների և անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունից բացի, առկա է նաև թափոնների և դրանց կառավարման, տեսակավորման ու վերամշակման գիտելիքների և իրազեկվածության ցածր մակարդակ: Տարբեր գեկույցներ մատնանշում են աղբավայրերի թերի վիճակի, թափոնների տեսակավորման մասնատված ջանքերի, աղբի քանակի ու դրա կրճատման, տեսակավորման, հավաքի, վնասագերծման և օգտահանման հետ կապված խնդիրներ, ինչպես նաև՝ կայուն բիզնես մոդելների բացակայության մասին, ներառյալ թափոնների կանխարգելման մեխանիզմները, ինչն էլ առաջացնում է սոցիալական, բնապահպանական և ընդհանուր սանիտարական խնդիրներ¹:

Առկա ուսումնասիրությունները վկայում են, որ մինչ այժմ Հայաստանում թափոնների կառավարման և իրազեկվածության բնագավառում կատարված բոլոր ջանքերն ավելի շատ նման են անհատական, տեղայնացված, փոքրածավալ ջանքերի, քան կենտրոնացված հետևողական քաղաքականության կամ ռազմավարության:

Հայաստանում թափոնների հավաքման համակարգի նոր ռազմավարությունը մշակվել է 2020 թվականին: Այն միտված է թափոնների հավաքման ծառայությունների բարելավմանը և բարձր բնապահպանական չափանիշների կիրառմանը, թափոնների վերամշակման համապատասխան մեխանիզմների ներդրմանը և այլն: Չնայած ռազմավարության ընդունմանը՝ այն իրականացվում է թերի և դանդաղ՝ հիմնականում ֆինանսական ու վարչական ռեսուրսների սակավության պատճառով: Հայաստանում 2018 թվականին աղբավայրեր է տեղափոխվել 493,9 հազար տոննա ԿԿԹ²:

Վերջին տարիներին Հայաստանում գործում են մի շարք նախաձեռնություններ, որոնք իրականացնում են կոշտ կենցաղային աղբից պլաստիկի, ապակե և թղթե թափոնների տարանջատված հավաք՝ վերամշակման նպատակով: Որոշ դեպքերում այդ նախաձեռնություններն ունենում են ֆինանսական օժանդակություն միջազգային կազմակերպություններից, որոշներն էլ հիմնվում են բնակիչների օժանդակության վրա:

Միջազգային կազմակերպությունների կողմից աջակցություն ստացած նախաձեռնություններից է «Պլաստիկ թափոնների հավաքում և վերօգտագործում» ծրագիրը, որը 2011 թվականի փետրվարին ՄԱԶԾ-ն, ԱՄՆ ՄԶԾ-ի և հայկական «Էկո Ինջիներինգ» ՄՊԸ-ի հետ համագործակցությամբ, Հայաստանի յոթ մարզերի 14 խոշոր քաղաքային համայնքներում սպասարկում էր ավելի քան 330 000 բնակչի: Ծրագիրն իրականացնում էր PET թափոնների ավելի քան 60% առանձնացում, նախնական մշակում և տեղափոխում վերամշակման:

¹ «Թափոնների կառավարումը Հայաստանում» գեկույց, (2020), Երևան: <https://ace.aua.am/files/2020/08/WGA-Report-Arm.pdf>

² Նույն տեղում, էջ 28

Վերամշակում նախաձեռնող մասնավոր կազմակերպություններից է «SmartApaga» ՄՊԸ-ն: Կազմակերպությունն առաջարկում է թափոնների տեղափոխման վճարովի ծառայություն: Վերջինիս ծառայություններից օգտվում են Հայաստանում ավելի քան 1000 կազմակերպություն:

Մեկ այլ նախաձեռնություն է «Recycle It!» ծրագիրը, որը «Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» («ԱյԷսԷսԴի») ՀԿ-ն սկսել է 2017 թվականին և որին միացել է Երևանի քաղաքապետարանը:

Նախագծի նպատակն է Հայաստանում նպաստել աղբի, թափոնների տեսակավորման ու վերամշակման մշակույթի ձևավորմանը՝ տեսակավորման ամանների տեղադրման և թափոնների կառավարման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցով: Ծրագիրն իրականացվում է 2018 թվականից ՄԱԶԾ-ԳԷՀ կողմից ֆինանսավորվող փոքր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում³:

Համաձայն կազմակերպության տնօրենի՝ ՀԿ-ի միջոցով այժմ թափոնների տեսակավորում է իրականացվում Հայաստանի ավելի քան 500 կազմակերպություններում՝ ներառյալ կրթական հաստատություններում, մասնավոր ընկերություններում, պետական հաստատություններում⁴:

2018 թվականից Հայաստանում գործում է «Էկո աղբ» հասարակական կազմակերպությունը, որը զբաղվում է թափոնների հավաքով ու տեսակավորմամբ: Սկզբնական շրջանում կազմակերպությունը զբաղվում էր միայն թղթե թափոններով և քաղաքացիների միջոցով կազմակերպում էր դրանց տեսակավորումն ու ուղարկում էր վերամշակման: Հետագայում տեսակավորմանն ավելացավ նաև պլաստիկը, իսկ հետո նաև թափոնների այլ տեսակներ: Նախաձեռնությունը պոլիէթիլենային տոպրակներից նորից պոլիէթիլենային տոպրակներ է պատրաստում, իսկ պլաստմասսայի մի մասը Ռուսաստանի Դաշնություն է տեղափոխում, քանի որ Հայաստանում մշակում չի իրականացվում: Մի մասից էլ պատրաստվում են դույլեր, թասեր, գոգաթիակներ, ձագարներ, կախիչներ, ծաղկամաններ և այլն: Ապակե շշերը նորից վերածվում են ապակու: Նախաձեռնությանը միացել են նաև տնտեսվարողները⁵:

2020 թվականից գործում է նաև TAPON.AM-ը բջջային հավելվածը, որն օգնում է կուտակված թղթի թափոնն ուղարկել վերամշակման: Հավելվածը նախատեսված է բոլորի համար. դրանից կարող են օգտվել թե՛ տանը թղթի թափոնն աղբից առանձին տեսակավորողները, թե՛ այն հավաքողներն ու վերամշակման հանձնողները: Նախաձեռնության կայքէջն է <https://tapon.am/home>:

³ Երևանի քաղաքապետարան, 2018: *Երևանի քաղաքապետարանը միացել է աղբի տեսակավորման ու վերամշակման «Recycle it» ծրագրին*: <https://bit.ly/3OBeZhh>

⁴ Հայաստանի ամերիկյան համալսարան, 2021: *Միսիթար Ավետիսյանի (MEIESM '17) մանկության երազանքը որպես ճանապարհի դեպի նորարարական լուծումներ*: <https://bit.ly/3rI0Bdt>

⁵ Էլիզա Բալայան, 2019: *«Էկո-աղբ»-ը ձևավորում է էկո-մշակույթ. անհրաժեշտ է տարանջատել թափոնն աղբից*: ԱՐՄԵՆՊՐԵՍ: <https://armenpress.am/arm/news/964651/>

⁶ Ամալյա Մարգարյան, 2019: *Քաղաքացիները վերամշակման համար կհավաքեն թափոններ. Դավթաշենում մեկնարկել է «Էկո թաղամաս» ծրագիրը*: Հետք: <https://hetq.am/hy/article/102823>

Հայաստանում կոշտ թափոնների առնչվող կառույցների ցանկը՝ ըստ կառույցների տեսակների, հասանելի է <https://ace.aua.am/hy/waste/library/institutions/> կայքում:

Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ

Մույն հետազոտության հիմնական ուսումնասիրության տարածք է հանդիսանում Երևան քաղաքը: Քաղաքում թափոնների տեսակավորմանն ուղղված գործողությունները համակարգում է 2019 թվականին հիմնված «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի Թափոնների տեսակավորման վարչությունը: ՀՈԱԿ-ը գործում է Երևանի քաղաքապետարանի ներքո:

Թափոնների տեսակավորման վարչության հիմնական գործառույթներն են՝ Երևանում վերամշակման ենթակա ԿԿԹ-ների ընդունման, հավաքի, տեսակավորման, վերամշակման, ժամանակավոր պահեստավորման, հանձնման, վերաօգտագործման և վերամշակման ու վնասագերծման կազմակերպումն ու համակարգումը, թափոնամանների տեղադրումն ու սպասարկումը, բնակչության շրջանում թափոնների տեսակավորման վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը և այլն:

Այսպիսով, 2019 թվականից ի վեր Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ քաղաքում մեկնարկել են վերամշակվող թափոնների մուտքն աղբավայր նվազագույնի հասցնելուն և տեսակավորման մշակույթ ներդնելուն ուղղված նախաձեռնություններ:

Մասնավորապես, 2019 թվականի ամռանը Երևան քաղաքը սահմանեց կենցաղային թափոնների ընդունման կետեր, որտեղ քաղաքացիները կարող են անվճար բերել և տեղադրել իրենց խոշոր եզրաչափերի և այլ տեսակի կենցաղային թափոնները՝ դրանք ընդհանուր մունիցիպալ թափոնների աղբարկղերում դնելու փոխարեն:

2020 թվականի դեկտեմբերից նոր պիլոտային ծրագրով Երևանի վարչական շրջաններում սկսել են տեղադրվել թափոնների տեսակավորման համար նախատեսված թափոնամաններ: Պիլոտային ծրագիրն աջակցություն է ստացել միջազգային գործընկեր կառույցներից: 2021 թվականի մարտի դրությամբ քաղաքի 135 հասցեներում տեղադրված է եղել ընդհանուր 400 թափոնաման: Պիլոտային ծրագիրը ներառում է քաղաքի բոլոր վարչական շրջանները:

Երևանի բնակիչների համար տեսակավորման գործընթացը դյուրին և հարմար դարձնելու նպատակով տեղադրվել է երեք գույնի թափոնաման: Մասնավորապես, դեղին թափոնամանները նախատեսված են թղթի համար, կապույտը՝ պլաստիկի և մոխրագույնն ապակու համար⁷:

Մեկ այլ նախագիծ մեկնարկել է մինչ թափոնամանների տեղադրումը. 2020 թվականին քաղաքապետարանի ջանքերով սկսվել է տնտեսվարողներից ստվարաթղթի կանոնավոր հավաքը և վերամշակման հանձնումը, որի նպատակով քաղաքում ժամանակավոր երեք կայաններ են ստեղծվել⁸:

⁷ Երևանի քաղաքապետարան, 2021: *Թափոնները վերամշակվում են. Երևանի 135 հասցեներում արդեն 400 թափոնաման է տեղադրված:*

<https://bit.ly/36EBy3w>

⁸

Երևանի քաղաքապետարան, 2020: *Քաղաքապետարանը թափոնների տեսակավորումն սկսել է ստվարաթղթից:*

<https://bit.ly/3rOOTxL>

Թափոնների տեսակավորման վարչությունը նաև զբաղվում է բնակչության իրազեկման աշխատանքներով՝ առցանց հարթակների, սոցիալական մեդիայի և այլ աղբյուրների միջոցով տեղեկատվական նյութեր տեղադրելու և տարածելու միջոցով:

Թափոնների տեսակավորման մշակույթի ներդրման մեկ այլ նախաձեռնություն մեկնարկել է 2021 թվականի սեպտեմբերին Երևանի քաղաքապետարանի, «Այ Էս Էի Դի» համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» ՀԿ-ի և «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերության միջև կնքված փոխըմբռնման հուշագրով: «Աշխարհը՝ առանց թափոնների» նախագիծը ներդրվել է Երևանի հանրակրթական դպրոցներում: Վերջինիս շրջանակներում ուսուցիչներն ու աշակերտները տեսակավորելու և վերամշակման են հանձնելու թղթ և պլաստիկի թափոնները: Սույն ծրագրի արդյունքում 50 դպրոցներում տեղադրվել է 200 թափոնաման: Ծրագիրն ունի նաև կրթական բաղադրիչ, որի նպատակն է աշակերտների և ուսուցիչների իրազեկվածության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումների և դասընթացների անցկացում⁹:

Մեթոդաբանություն

Հետազոտության հիմքում ընկած է համապատասխան գրականության ուսումնասիրումը և Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների 198 բնակչի հետ դեմատեղ հարցումը: Եզրակացությունների և առաջարկների մշակման համար հարցազրույցներ են արվել նաև ոլորտի մասնագետների հետ:

Գրականության ուսումնասիրում

Ուսումնասիրվել է տարբեր երկրներում ԿԿԹ-ի տեսակավորման գործելակերպերի և մեխանիզմների, տնային տնտեսությունների՝ տեսակավորման և վերամշակման վարքագծի և դրա վրա ազդող գործոնների մասին առկա գրականությունը:

Հարցում բնակիչների շրջանում

Հարցումներն իրականացվել են 2021 թվականի հուլիս և օգոստոս ամիսներին: Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցել է Երևան քաղաքի 198 բնակիչ, որոնց բնակության վայրի մոտակայքում կան թափոնամաններ: Հարցումները տեղի են ունեցել Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների 24 հասցեներում, որտեղ տեղադրված են թափոնամաններ (բաշխումը տե՛ս աղյուսակ 1-ում): 2021 թվականի հուլիսի դրությամբ թափոնամաններ տեղադրված են եղել 133 հասցեներում:

Մշակվել է քվոտային ընտրանք՝ հիմքում ունենալով սեռի և տարիքի համամասնությունը: Հարցման ուսումնասիրության տարածքը Երևան քաղաքն է, որտեղ 2020 թվականի դեկտեմբերից սկսած 136 հասցեներում տեղադրվել են թղթի, պլաստիկի և ապակու տեսակավորման թափոնամաններ:

Ընտրանքը ձևավորելու համար նախ առանձնացվել են հարցման մասնակիցների վեց ենթախումբ՝ ըստ սեռի՝ արական ու իգական (2) և տարիքի՝ 18-35, 36-55, 56 և բարձր (3): Յուրաքանչյուր խմբում հաշվարկվել է առնվազն 32 միավոր, հետևաբար՝ հարցման մասնակիցների ընդհանուր քանակ է որոշվել 192-ը: Հաշվի առնելով ենթախմբերի քանակը՝ որոշվել է հարցում անցկացնել 24 հասցեներում, որոնք համամասնորեն բաժանվեցին ըստ վարչական շրջանների: Հասցեների ընտրությունը կատարվել է պատահականության սկզբունքով:

Աղյուսակ 1

Թափոնամանների քանակը՝ ըստ վարչական շրջանների		Հասցեների քանակ, որ պետք է այցելել
Կենտրոն	20	4
Աջափնյակ	14	3
Դավթաշեն	8	1
Նոր Նորք, Նորք-Մարաշ	14	2
Ավան	9	2
Քանաքեռ-Զեյթուն	10	2

Արաբկիր	15	2
Էրեբունի, Նուբարաշեն	15	3
Շենգավիթ	13	2
Մալաթիա-Սեբաստիա	15	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ	133	24

Յուրաքանչյուր հասցեում անցկացվել է 8 հարցում, որոնց համար յուրաքանչյուր մասնակցի ընտրությունը կատարվել է հետևյալ կերպ՝

- 1) գենդերային համամասնության/ներկայացվածության ապահովման տեսանկյունից ընտրվել է չորս կին և չորս տղամարդ մասնակից,
- 2) տարիքային խմբերի հավասարաչափ բաշխման տեսանկյունից ընտրվել է 18-35 տարեկան երեք մասնակից, 36-55 տարեկան երեք մասնակից և երկու մասնակից, որոնց տարիքն է 56 և ավելի,
- 3) թափոնների տեսակավորման փորձի տեսանկյունից նպատակ է դրվել յուրաքանչյուր հասցեում գտնել նվազագույնը երկու բնակիչ, որոնք օգտվում են տեսակավորման թափոնամաններից:

Հարցման արդյունքների վերլուծությունն արվել է Microsoft Excel և IBM SPSS Statistics ծրագրերի միջոցով:

Հարցազրույցներ ոլորտի փորձագետների հետ

Հետազոտության անցկացման մեթոդներից է ոլորտի փորձագետների, ինչպես նաև ոլորտում գործող ակտիվ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հարցազրույցների անցկացումը:

Հարցազրույցների նպատակն է պարզել Երևանի բնակիչների հետ թափոնների տեսակավորման վերաբերյալ տարված աշխատանքները, այդ աշխատանքների ընթացքում հանդիպած խոչընդոտները, բնակիչներին իրազեկելու և տեսակավորման գործընթացում ներգրավելու հաջողված փորձը:

Հարցազրույցներ են անցկացվել հետևյալ փորձագետների հետ՝

- 1) Հռիփսիմե Մկրտչյան, «Էկոադր» ՀԿ-ի համահիմնադիր,
- 2) Արգիշտի Դարբինյան, ոլորտի փորձագետ, «Էկոադր» ՀԿ-ի ներկայացուցիչ,
- 3) Մխիթար Ավետիսյան, ««Այ Էս Էս Դի» համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» ՀԿ-ի համահիմնադիր,
- 4) Հարություն Ալպետյան, ՀԱՀ Ցակոբեան բնապահպանական կենտրոնի շրջանաձև տնտեսության փորձագետ:

Գրականության ուսումնասիրում

Ի՞նչ են կոշտ կենցաղային թափոնները

Աշխարհում տարեկան գոյանում է 2,01 միլիարդ տոննա ԿԿԹ, որի առնվազն 33%-ը չի կառավարվում էկոլոգիապես անվտանգ եղանակով: Ամբողջ աշխարհում մեկ անձի համար օրական արտադրվող թափոնները միջինում կազմում են 0,74 կիլոգրամ, բայց տատանվում են 0,11-ից մինչև 4,54 կիլոգրամի սահմաններում: Թեև բարձր եկամուտ ունեցող երկրները կազմում են աշխարհի բնակչության միայն 16%-ը, նրանք ստեղծում են աշխարհի թափոնների մոտ 34%-ը կամ 683 միլիոն տոննա:

Ակնկալվում է, որ մինչև 2050 թվականը գլոբալ թափոնները կաճեն մինչև 3,40 միլիարդ տոննա. նույն ժամանակաշրջանում բնակչության կրկնապատիկ աճ կլինի: Ընդհանուր առմամբ, կա դրական հարաբերակցություն թափոնների առաջացման և եկամտի մակարդակի միջև: Բարձր եկամուտ ունեցող երկրներում օրական մեկ շնչի հաշվով թափոնների առաջացումը կանխատեսվում է, որ կավելանա 19%-ով՝ համեմատած ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների հետ, որոնցում ակնկալվում է, որ այն կավելանա մոտ 40%-ով կամ ավելի: Արևելյան Ասիան և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանն արտադրում են աշխարհի թափոնների մեծ մասը՝ 23%-ը, իսկ Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանն ամենաքիչն են արտադրում՝ 6%-ը: Այնուամենայնիվ, ամենաարագ զարգացող շրջաններն են Աֆրիկան, Հարավային Ասիան և Մերձավոր Արևելքն ու Հյուսիսային Աֆրիկան, որտեղ մինչև 2050 թվականն ակնկալվում է, որ ընդհանուր թափոնների արտադրությունը համապատասխանաբար կեռապատկվի և կրկնակի կավելանա: Այս շրջաններում թափոնների կեսից ավելին ներկայումս թափվում է, և թափոնների աճի հետևանքները հսկայական ազդեցություն կունենան շրջակա միջավայրի, առողջության և բարեկեցության վրա (The World Bank, 2018):

Հետխորհրդային երկրներ

Մի շարք հետխորհրդային երկրներում, մասնավորապես՝ Բելառուսում, Ռուսաստանում, Ղազախստանում, Ուկրաինայում, Մոլդովայում և Վրաստանում, ԿԿԹ համակարգի հիմնական բնութագրիչներն են (1) աղբավայրը՝ որպես թափոնների կառավարման հիմնական մեթոդ, (2) «թափոնների առաջացման նորմատիվի» վրա հիմնված սակագնային քաղաքականությունը՝ մեկ շնչի հաշվով թափոնների հավաքման և հեռացման համար, (3) սարքավորումների գերօգտագործումը, (4) վերամշակման կարողությունների թերզարգացումը, (5) քաղաքային տարածքներում աղբի կուտակումները, (6) վերամշակելի նյութերի հավաքման և վերօգտագործման ոչ ֆորմալ և անօրինական հատվածի զարգացումը:

Հետխորհրդային երկրներում գրեթե բոլոր թափոնները հեռացվում են աղբավայր. մինչև 100%-ը՝ Վրաստանում և Մոլդովայում, 94%-ը՝ Ղազախստանում և Ուկրաինայում, մոտ 90%-ը՝ Ռուսաստանում և մոտ 80%-ը՝ Բելառուսում: Ուկրաինայում, Ռուսաստանում և Ղազախստանում վերամշակման մակարդակը 8%-ից պակաս է, իսկ Բելառուսում՝ մոտ 20% (Skryhan et al., 2018, p. 195):

ԿԿԹ-ի սահմանում

Չնայած հասկացության լայն կիրառմանը՝ թափոնները չունեն հստակ սահմանում: Ինժեներները ԿԿԹ-ն սահմանում են որպես զանգվածներ, որոնք օտարվում են բնակելի և առևտրային տարածքներից (Williams, 2005) կամ՝ որպես իրեր, որոնք սեփականատիրոջ համար դադարել են ունենալ արժեք (McDougall et al., 2001):

Մարդաբանները պնդում են, որ թափոնները լավագույնս են ցուցադրում տվյալ երկրի կամ բնակավայրի մշակույթը և կարող են ահռելի քանակությամբ տեղեկատվություն փոխանցել մարդկանց վարած կյանքի մասին (Rathje & Murphy, 2001):

Բնապահպանները պնդում են, որ բնության մեջ թափոններ չկան (McDonough & Braungart, 2002), իսկ արդյունաբերական բնապահպանները թափոնները դիտարկում են որպես ճիշտ երևույթ, որը հայտնվել է սխալ տեղում (Desrochers, 2002):

Ընդունված սահմանման համաձայն՝ ԿԿԹ-ն առօրյա կյանքում առաջացած կոշտ թափոններն են: Դրանք նաև այն կոշտ թափոններն են, որոնք օրենքով սահմանվում են որպես կենցաղային թափոններ (Chen et al., 2018): Այդ թափոնները հիմնականում գոյանում են տներից (գերակշռող մասը), հասարակական վայրերից, առևտրային կետերից և այլն (Zhang et al., 2010):

Կենցաղային աղբի կառավարումը հաճախ ընկալվում է որպես տվյալ քաղաքի կամ երկրի կառավարման ցուցանիշ: ԿԿԹ-ները ոչ միայն քաղաքային միջավայրի աղտոտման խոշորագույն գործոն են, այլև ռեսուրս, որոնք կարող են օգտագործվել և լինելով այլընտրանքային էներգիայի աղբյուր՝ տեխնոլոգիական նորարարությունների օգնությամբ կարող են վերամշակվել՝ ուղղորդվելով արտադրության հիմնական հոսքեր (Heidrich et al., 2010; Mühle et al., 2010):

Թափոնների տեսակավորումը սկզբնաղբյուրում

Գլոբալ առումով թափոնների ծավալներն արագորեն աճում են, և ըստ Համաշխարհային բանկի գնահատման՝ մինչև 2025 թվականը տեղի կունենա ԿԿԹ-ի 70% համաշխարհային աճ: Վերամշակումը ներկայումս առկա կարևորագույն գործողություններից մեկն է՝ թափոնների շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու համար: Եթե Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրներում (OECD) միջինում այն կազմում է մոտավորապես 22%, շատ զարգացող երկրներում վերամշակման մակարդակը տատանվում է 1-3% միջակայքում (Johansson, 2016):

Թափոնների հավաքման ամբողջ գործընթացում բնակիչների կողմից թափոնների տեսակավորումն ամենաառաջնային օղակն է, որը նաև կոչվում է տեսակավորում սկզբնաղբյուրում (source separation): Սկզբնաղբյուրում տեսակավորման արդյունավետությունից է կախված ոչ միայն թափոնների հավաքման, փոխադրման և հետագա մշակման դժվարության աստիճանը, այլև վերամշակման յուրաքանչյուր օղակի արդյունավետությունը: Հետևաբար, թափոնների առաջնային տեսակավորումը թափոնների արդյունավետ վերամշակման ապահովման հիմնարար նախապայմանն է (Andrews et al., 2013):

Այդ պատճառով շատ կարևոր է ուսումնասիրել այն գործոնները, որոնք ազդում են տեսակավորման վարքագծի վրա, տեսակավորման հիմնական մոտիվացիոն խթանները, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք ընկալվում են որպես խոչընդոտ՝ բնակիչների կողմից կանոնավոր և արդյունավետ տեսակավորում իրականացնելու համար:

Թափոնների տեսակավորման տարբեր տեսանկյունները հաշվի առնելով՝ գիտնականներն առաջ են բերում դրա տարբեր սահմանումներ: Աննա Ջենքը և այլք թափոնների տեսակավորումը սահմանում են հետևյալ կերպ. «Տեսակավորել վերամշակվող և աղբավայր ուղարկվող թափոնը սկզբնաղբյուրում՝ ըստ տեսակավորման տարբեր չափանիշների, ինչը նպատակ ունի նվազեցնել թափոնների հետագա հեռացման դժվարությունը, օժանդակել ռեսուրսների վերամշակմանը և նվազեցնել աղբավայրերից գոյացած բնապահպանական վնասները» (Janak et al., 2015): Չինական Արիփրասերթը և այլք ձևակերպում են թափոնների տեսակավորումը՝ որպես առօրյա կյանքում ԿԿԹ-ները սկզբնաղբյուրում տարանջատելու, այնուհետև դրանք թափոնների հավաքման

կենտրոն տեղափոխելու գործընթաց՝ ընտրովի վերամշակման և այրման համար (Areeprasert et al., 2018):

Այս ուսումնասիրության մեջ թափոնների տեսակավորումը դրանց կառավարման գործընթացում թափոնների առաջացման առաջնային աղբյուր հանդիսացող բնակիչների կողմից թափոնների տեսակավորումն է՝ ըստ սահմանված կատեգորիաների և դրանք սահմանված վայրում տեղադրելն է՝ նվազեցնելու թափոնների հետագա մշակման դժվարությունը և նպաստելու անվնաս, ռեսուրսների վրա հիմնված և քանակապես հայտնի թափոնների իրացմանը:

Թափոնների տեսակավորման վարքագծի վրա ազդող գործոններ

Ներկայումս թափոնների տեսակավորման վարքագծի վրա ազդող գործոնների վերաբերյալ հետազոտությունները հիմնականում կենտրոնանում են հոգեբանական, անհատական/անձնական և իրավիճակային ասպեկտների վրա: Հոգեբանական ասպեկտը հիմնականում բաղկացած է արժեքների և ճանաչողության գործոններից, անհատական կամ անձնական ասպեկտը վերաբերում է ինչպես ժողովրդագրական բնութագրիչներին, այնպես էլ մշակույթին, կրոնին և կյանքի փորձին (Johansson, 2016), մինչդեռ իրավիճակային ասպեկտը հիմնականում վերաբերում է քաղաքականությունների, արտադրանքի և ինֆրաստրուկտուրայի գործոններին (A-Jalil et al., 2014):

Մարդկանց կողմից տեսակավորման հասնելու և, առհասարակ, կայացած վերամշակման համակարգ ունենալու համար անհրաժեշտ է հաշվի առնել տարբեր գործոններ, ինչպիսիք են ենթակառուցվածքները, գիտելիքների մակարդակը, վերաբերմունքը շրջակա միջավայրին և դրանց միջև բարդ փոխհարաբերությունները: Այնուամենայնիվ, կարևոր են նաև ժողովրդագրական բնութագրերը և սոցիալական նորմերը, ինչպես նաև խրախուսման սխեմաները, քաղաքականությունները կամ այն, թե որքան հասուն է տվյալ հասարակությունը (Johansson, 2016):

Ժողովրդագրական երկու ասպեկտների՝ տարիքի և սեռի ու տեսակավորման փոխհարաբերությունների ուսումնասիրությունների արդյունքները միանշանակ չեն, սակայն համաձայն շատ հետազոտողների՝ տարեց մարդիկ վերամշակմանն ունեն ավելի բարձր մասնակցություն:

Գիտելիքների մակարդակը զգալիորեն ազդում է վերամշակման մակարդակի վրա (Vining & Ebreo, 1990): Տեղեկատվությունը կարող է բարձրացնել բնապահպանական իրազեկությունը և ուղղորդել համապատասխան վարքագիծը: Տեղեկատվության տեսական կողմը մարդկանց տեղեկացնում է տեսակավորման և վերամշակման օգուտների և շրջակա միջավայրի վրա դրա ազդեցության մասին՝ դրանով իսկ օգնելով ձևավորել արժեքների վրա հիմնված մոտեցումներ (Echegaray & Hansstein, 2017): Տեղեկատվության գործնական մասը հեշտացնում է բուն տեսակավորման և վերամշակման գործընթացը:

Համաձայն հետազոտությունների՝ թափոնամանների հարմար/գրավիչ լինելու գործոնը տեսակավորման/վերամշակման վարքագծի վրա ունի ազդեցություն: Որքան ավելի հարմար են տեղադրված թափոնամանները՝ ներառյալ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար, որքան ավելի մոտ են բնակության վայրին և տեսակավորումը քիչ ժամանակ է խլում, անգամ՝ որքան տեսքից դրանք ավելի գրավիչ են, այնքան բարձրանում է բնակիչների կողմից տեսակավորման հավանականությունը (Corral-Verdugo et al., 2002; Jenkins et al., 2003): Աննա Բերնշտադը կենցաղային սննդի թափոնների վերաբերյալ իր հետազոտության մեջ նշում է, որ համեմատած ֆորմալ տեղեկատվության և իրազեկման արշավների հետ, համապատասխան հարմարությունների և ինֆրաստրուկտուրայի առկայությունը կարող է ավելի արդյունավետ լինել՝ բնակիչներին տեսակավորման դրդելու հարցում (Bernstad, 2014):

Գրականությունից առանձնացրած հիմնական գործոններ, որոնք ազդում են տնային տնտեսությունների վերամշակման վարքագծի վրա՝

- 1) Ենթակառուցվածքներ/հարմարություններ (տեսակավորման/վերամշակման եղանակներ, մասշտաբային աստիճան, դժվարության մակարդակ): Տեսակավորման բարդության աստիճանն ու հարմարավետությունը վերամշակման հետազոտությունների մեծ մասում համարվում են այն ամենակարևոր գործոնները, որոնք ազդում են տեսակավորման և վերամշակման մակարդակի վրա: Աղբամանների հաճախակի դատարկումը նույնպես խրախուսում է տնային տնտեսություններին ավելի շատ վերամշակել (Barr et al., 2005; Bernstad, 2014; Cherrett et al., 2012; Lyas et al., 2005):
- 2) Տեղեկատվություն/իրազեկում (տեղեկացվածության մակարդակ, բնապահպանական իրազեկվածություն, գովազդ, տնային տնտեսությունների ներգրավում (Bhate, 2005; Biswas et al., 2000):
- 3) Սոցիալական նորմեր կամ արժեքներ (հասարակական ճնշում կամ անձի կողմից ընկալվող ճնշում, համայնքների միջամտություն, տեղական շահերի խմբեր) (Biel and Thøgersen, 2007):
- 4) Անհատական գործոններ. անհատական կամ անձնական գործոնները ներառում են ինչպես ժողովրդագրական բնութագրիչները (տարիք, կրթություն, եկամուտ, բնակվելու վայր), այնպես էլ մշակույթը, կրոնը և կյանքի փորձը (Stern et al., 1995): Բացի այդ, ուսումնասիրությունները ենթադրում են, որ այն տնային տնտեսությունները կամ անհատները, որոնք նախատրամադրվածություն ունեն բնապահպանական գործողությունների հանդեպ, ավելի շատ են մասնակցում տեսակավորմանն ու վերամշակմանը (Saphores, Ogunseitán and Shapiro, 2012; Timlett and Williams, 2008):
- 5) Քաղաքականության գործիքներ (օրենսդրական կարգավորումներ և տնտեսական խթաններ/օգուտներ) (A-Jalil et al., 2014):
- 6) Կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունք:
- 7) Հետևանքի մասին իրազեկվածություն և արժեքի ու օգուտների գիտակցում:
- 8) Նախկինում վերամշակման վարքագիծ:
- 9) Վստահություն թափոնների կառավարման ընդհանուր համակարգի նկատմամբ:
- 10) Թափոնների տեսակավորման մասին գիտելիքներ (Vassanadumrongdee & Kittipongvises, 2018):

Տվյալների վերլուծություն

Հարցման արդյունքներ

Հարցաշարը բաղկացած է ստորև ներկայացված հինգ ենթաբաժնից.

1) Թափոնների տեսակավորման ներկայիս պրակտիկան

Հարցման սույն ենթաբաժինը նպատակ ունի բացահայտելու Երևանի բնակիչների՝ թափոնների տեսակավորման ներկայիս գործելաձևերը: Մասնավորապես, հարցերն ուղղված են պարզելու, թե արդյոք հարցման մասնակիցները տեսակավորում են թափոնները, եթե այո, ապա երբ են սկսել տեսակավորել, ինչպես և ինչպիսի հաճախականությամբ են ներկայումս տեսակավորում: Հարցերը նաև անդրադարձել են տեսակավորվող թափոնների տեսակներին (պլաստիկ, թուղթ, ապակի, մետաղ և այլն) և դրանց տեսակավորման հաճախականությանը:

2) Թափոնների տեսակավորման վարքագիծը (մոտիվացնող գործոնները, չտեսակավորելու պատճառները)

Հարցման սույն հատվածը բաղկացած է երկու մասից՝ առանձին հարցեր ուղղվով հարցմանը մասնակցած թափոններ տեսակավորող և չտեսակավորող բնակիչներին: Մի հատվածի հարցերն ուղղված են բացահայտելու թափոններ տեսակավորող բնակիչների համար մոտիվացիոն գործոնները և տեսակավորման գործընթացը բարդացնող հանգամանքները: Մինչդեռ մյուս հատվածը մտադիր էր պարզել այն գործոնները, որոնք կդրդեն թափոններ չտեսակավորող հարցվածներին սկսել տեսակավորել, ինչպես նաև՝ բացահայտել նրանց համար տեսակավորելուն խանգարող գործոնները:

3) Վերաբերմունքը թափոնների տեսակավորմանը և շրջակա միջավայրի պահպանությանը

Հարցման սույն ենթաբաժինը նպատակ ունի ուսումնասիրելու հարցման մասնակիցների վերաբերմունքը թափոնների տեսակավորմանը և շրջակա միջավայրի պահպանությանը: Մասնավորապես, հարցվածներին հարցեր են ուղղվել տեսակավորման խնդրի կարևորության, քաղաքում տեսակավորման թափոնամանների քանակի, սպասարկման, դրանց վրա տեղադրված ցուցումների և այլնի վերաբերյալ:

4) Թափոնների տեսակավորման վերաբերյալ ներկայիս գիտելիքները և տեղեկատվություն ստանալու նախընտրելի եղանակները

Հարցման սույն ենթաբաժնի նպատակն է պարզել, թե արդյոք բնակիչները երբևէ սովորել են, թե ինչպես պետք է տեսակավորել թափոնները և ինչ աղբյուրներից, և թե ներկայումս ինչ գիտելիքներ ունեն թափոնների տեսակավորման վերաբերյալ: Մասնավորապես, հարցերի միջոցով փորձ է արվել պարզելու, թե արդյոք բնակիչները տեղյակ են վերամշակման ենթակա թափոնների, տեսակավորման ճիշտ գործելաձևերի, դրանց բացասական ազդեցությունների մասին:

Սույն ենթաբաժնի նպատակն է նաև վեր հանել այն աղբյուրները և եղանակները, որոնց միջոցով բնակիչները կնախընտրեն տեղեկատվություն ստանալ և սովորել թափոնների տեսակավորման գործելաձևերը:


5) Ժողովրդագրական տվյալներ

Հարցման վերջին ենթաբաժնի նպատակն է հավաքել մասնակիցների ժողովրդագրական տվյալները:

Ամբողջական հարցաշարը ներկայացված է [Հավելված 1-ում](#): Յուրաքանչյուր ենթաբաժնի ամփոփումը և արդյունքների մանրամասն նկարագրությունը ներկայացված են ստորև:

1) Թափոնների տեսակավորման ներկայիս պրակտիկան

Հարցման 198 մասնակիցների 82%-ը նշում է, որ իրենց բակերում կան տեսակավորման թափոնամաններ: 66%-ը նշում է, որ երբեք չի տեսակավորում, 17%-ը երբեմն է տեսակավորում, 10%-ը՝ հաճախ և 7%-ը՝ միշտ (տե՛ս Պատկեր 1): Գերակշռող մասը տեսակավորում է տանը գոյացած թափոնները, 8%-ը՝ այլ վայրում գոյացած թափոնները և 3%-ը՝ և՛ տանը, և՛ այլ վայրում գոյացած թափոնները:



Հարցման մասնակից տեսակավորողների պատասխանների (N=67) 67%-ը գոյացած թափոնները դնում է գունավոր թափոնամաններում:

Հարցին, թե երբևից են սկսել տեսակավորել, հարցման՝ տեսակավորում իրականացնող մասնակիցների (N=67) կեսից ավելին նշում է, որ տեսակավորել սկսել է վերջին մի քանի ամիսներին, 32%-ը սկսել է տեսակավորել թափոնամանները տեղադրելու օրից, իսկ 12%-ը՝ հենց նկատել է թափոնամանները: Հարցման երկու մասնակից նշում է, որ թափոնները սկսել է տեսակավորել մոտ մեկ տարի առաջ:


Հարցման մասնակից տեսակավորողների պատասխանների (N=67) արդյունքներից ակնհայտ է դառնում, որ առավելապես տեսակավորում են այն թափոնները, որոնց համար քաղաքապետարանը տեղադրել է տեսակավորման թափոնամաններ: Մասնավորապես, պլաստիկը հիմնականում ամբողջությամբ տեսակավորում է տեսակավորողների 97%-ը, թուղթը՝ 93%-ը, իսկ ապակին՝ 84%-ը: Ինչ վերաբերում է մետաղական, օրգանական և հագուստի թափոնին, ապա դրանք տեսակավորում են տեսակավորողների համապատասխանաբար 30, 44 և 50 %-ը: Էլեկտրոնային սարքավորումները (լամպեր, կենցաղային տեխնիկա, և այլն) և մարտկոցները տեսակավորում են տեսակավորողների 3%-ը:

2) Թափոնների տեսակավորման վարքագիծը (մոտիվացնող գործոնները, չտեսակավորելու պատճառները)


2.1 Թափոններ տեսակավորողների մոտիվացիոն գործոնները

Հարցմանը մասնակցած տեսակավորում անող մասնակիցներին (N=67) առաջարկվել է ընտրել առավելապես կարևոր մինչև երեք գործոն, որոնք մոտիվացնում են իրենց տեսակավորել թափոնները: Համաձայն հարցվածների 80%-ի՝ առաջնային մոտիվացնող գործոն է բնակության վայրի հարևանությամբ տեսակավորման թափոնամանների առկայությունը: Երկրորդ տեղում է միջավայրի հանդեպ պատասխանատվության կամ հոգատարության զգացումը (52%): 32%-ը նշում է կլիմայի փոփոխությունը և այլ բնապահպանական մտահոգություններ:

Հարցման մասնակիցներից փորձ է արվել ճշտելու այն գործոնները, որոնք կնպաստեն թափոններ ավելի շատ տեսակավորելուն (տե՛ս՝ Պատկեր 2): Մասնակիցներն ընտրել են առավել կարևոր երեք գործոն: Այսպիսով, մասնակիցների 45%-ը նշում է, որ համապատասխան օրենքի սահմանումը և կիրարկումը կնպաստեն ավելի շատ տեսակավորելուն: Այլ հնարավոր նպաստող գործոններից՝ են սոցիալական նորմի հաստատումը (41%) (այսինքն՝ եթե շրջապատում բոլորը տեսակավորեն թափոնները), ճիշտ տեսակավորման մասին գիտելիքների ավելացումը (39%), տեսակավորման հետ կապված հետևանքների մասին իրազեկումը (29%), տեսակավորման օգուտների մասին իրազեկումը (29%), վերամշակման գործընթացի թափանցիկության բարձրացումը (32%):



Հարցին, թե որ հիմնական գործոններն են, առհասարակ, բարդացնում թափոնների տեսակավորումը, տեսակավորողների 45%-ը պատասխանել է, որ վստահ չէ, որ համապատասխան մարմինները տեսակավորված թափոնները կհանձնեն վերամշակման: 19%-ը




նշում է մոտակայքում թափոնամանների բացակայությունը, 16%-ը տեսակավորումը ժամանակատար գործընթաց է համարում, իսկ 7%-ը հայտնել է, որ չի կարծում, թե մեկ մարդու տեսակավորումից որևէ բան կփոխվի (տե՛ս Պատկեր 3): Այս դեպքում նույնպես մասնակիցներին առաջարկվել է նշել առավելագույնը երեք պատասխան:

2.2 Թափոններ չտեսակավորողների համար խանգարող հանգամանքները

Հարցին, թե որ հիմնական գործոններն են խանգարում տեսակավորել թափոնները, չտեսակավորողների (N=131) 48%-ը պատասխանել է, որ չգիտի, թե ինչը և ինչպես տեսակավորել: 31%-ը կարծում է, որ մեկ մարդու տեսակավորումից որևէ բան չի փոխվի, իսկ 19%-ի կարծիքով՝ տեսակավորումը ժամանակատար է: Այլ պատասխաններից են՝ տանը տեսակավորման համար հարմար տարածք չունենալը, մոտակայքում թափոնամանների բացակայությունը, համապատասխան մարմինների նկատմամբ վստահություն չունենալը՝ տեսակավորված թափոնները վերամշակման հանձնելու վերաբերյալ: Հարցման մասնակիցները, որպես խանգարող հանգամանք, նաև նշում են սոցիալական նորմի բացակայությունը և սովորություն չունենալը: Հարցման մասնակիցներին առաջարկվել է նշել առավելագույնը երեք պատասխան:

Մեկ այլ հարց էլ, որ ուղղվել է թափոններ չտեսակավորողներին, այն է, թե ինչը կդրդի նրանց տեսակավորել թափոնները: Հարցման մասնակիցներին առաջարկվել է նշել առավելագույնը երեք պատասխան: Պատասխանողների կեսից ավելին՝ 55%-ը, նշում է, որ համապատասխան օրենքի սահմանումը և կիրարկումը կդրդի տեսակավորել, իսկ 46%-ը պատասխանել է, որ իրենց համար տեսակավորմանը դրդող գործող կհամարվի սոցիալական նորմի հաստատումը, եթե շրջապատում բոլորը տեսակավորեն: Միևնույն ժամանակ, 31%-ի կարծիքով ճիշտ տեսակավորման մասին գիտելիքների ավելացումը դեր կխաղա թափոնների տեսակավորում իրականացնելու մեջ (տե՛ս Պատկեր 4):




Պատկեր 4

3) Վերաբերմունքը թափոնների տեսակավորմանը/շրջակա միջավայրի պահպանությանը

Հարցին, թե իրենց կարծիքով, թափոնների ոչ պատշաճ տեսակավորումը և վերամշակման ցածր մակարդակը, առհասարակ, խնդի՞ր է Հայաստանի համար, հարցվածների 67%-ը նշում է, որ խնդիրը կարևոր, բայց ոչ առաջնային է, 22%-ը համարել է, որ միանշանակ ամենակարևոր խնդիրներից է, իսկ 11%-ն այն ընդհանրապես կարևոր խնդիր չի համարում (տե՛ս Պատկեր 5):

Ի՞նչ եք կարծում, թափոնների ոչ պատշաճ տեսակավորումը և վերամշակման ցածր մակարդակը, առհասարակ, խնդիր Զ Հայաստանի համար:
Պատասխանողների քանակ՝ 193



Պարզելու համար, թե մասնակիցների կարծիքով, շրջակա միջավայրի պահպանությունը հիմնականում ում պարտականությունն է, 83%-ից ավելին նշում է թե՛ իշխանությունների, թե՛ հասարակության յուրաքանչյուր անդամի: Հետաքրքիր է, որ հարցվածների միայն 43%-ն է համարում, որ շրջակա միջավայրի պահպանությունը թափոն ստեղծող/ առաջացնող կազմակերպության պարտականությունն է:

Հարցման մասնակիցների 9%-ը (N=196) պատրաստ է ամսական կամ տարեկան որոշակի գումար վճարել՝ վերամշակման ամբողջական համակարգ ստեղծելու համար, 30%-ը՝ ավելի շուտ հակված է վճարել, 41%-ը՝ ավելի շուտ հակված չէ հավելյալ վճարների և 20%-ը՝ դեմ է վերամշակմանն ուղղված ամսական կամ տարեկան վճարներին:

Հարցվածների 87%-ից ավելին նշում է, որ գնումներ կատարելու ժամանակ չի առաջնորդվում ապրանքների կամ դրանց տարաների վերամշակելի լինելու կամ թափոն չառաջացնելու գործոններով:

Հարցվածների տեղեկացվածությունը Երևան քաղաքում տեղադրված տեսակավորման թափոնամանների քանակի վերաբերյալ բավականին ցածր է: Այսպես, հարցին, թե քաղաքում տեսակավորման համար բավարար քանակի թափոնամաններ կան, հարցվածների 53%-ը (N=197) չունի պատասխան, 30%-ը պնդման հետ համաձայն չի, իսկ 5%-ը համարում է, որ տեսակավորման թափոնամանների քանակը բավարար է:

Հարցվածների 58%-ից ավելին (N=197) համարում է, որ տեսակավորման թափոնամանները պատշաճ կերպով սպասարկվում են և թափոնների հավաքը թափոնամաններից ճիշտ ժամանակին է կատարվում:


4) Թափոնների տեսակավորման վերաբերյալ ներկայիս գիտելիքները և տեղեկատվություն ստանալու նախընտրելի եղանակները

Հարցման արդյունքում պարզվեց, որ հարցվածների 75%-ը երբևէ չի սովորել ճիշտ տեսակավորել թափոնները: Նրանք, ովքեր սովորել են, տեղեկատվությունը ստացել են համացանցի (29%), հեռուստատեսային հաղորդումների (27%) կամ հարազատների/ընկերների միջոցով (21%):

Հարցվածները, հիմնականում, վստահ չեն, որ հստակ գիտեն, թե որ թափոններն են վերամշակման ենթակա: Հարցվածների 93%-ը չգիտի վերամշակվող և չվերամշակվող պլաստիկի տեսակները:


Միննույն ժամանակ, հարցվածների 40%-ը չգիտի, թե որ թափոններն են վտանգավոր շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար:

Հարցման մասնակցիներին ուղղված հարցերից էր, թե արդյոք նրանք կարծում են, որ հասարակությունը պատշաճ կերպով և պարբերաբար տեղեկացվում է թափոնների չտեսակավորման բացասական հետևանքների մասին: Պատասխանողների մեծամասնությունը՝ 73%-ը, նշեում է որ այդպես չի կարծում, իսկ 26%-ը դժվարացել է պատասխանել հարցին (տե՛ս Պատկեր 6):




Պատկեր 6

Հարցին, թե որոնք են թափոնների տեսակավորման մասին գիտելիքներ և տեղեկատվություն ստանալու համար նախընտրելի հիմնական աղբյուրները, հարցման մասնակիցները նշում են՝ լրատվամիջոցները (95%), աշխատավայրը (23%), քաղաքապետարանը (11%), դպրոցներն ու համալսարանները (8%) և ոլորտում մասնագիտացված կազմակերպությունները (7%) (տե՛ս Պատկեր 7): Հարկ է նշել, որ պատասխանողներին առաջարկվել է նշել առավելագույնը երեք աղբյուր:



Պատկեր 7

Հարցման մասնակիցներից նաև փորձ է արվել պարզել թափոնների տեսակավորման մասին գիտելիքներ և տեղեկատվություն ստանալու համար նախընտրելի հիմնական եղանակները:



Ուսուիւն 8

Պատասխանողներից ակնկալվել է նշել առավելագույնը երեք եղանակ: Առավելագույն պատասխան ստացած եղանակներն են՝ հեռուստատեսային հաղորդումները (54%), սոցիալական կայքերում տեղեկատվության տրամադրումը (49%), սոցիալական գովազդները (30%), քաղաքում տեղադրված ցուցանակները (25%) և անմիջապես թափոնամանների մոտ տեղադրված ցուցանակները (23%) (տե՛ս Պատկեր 8):

5) Ժողովրդագրական տվյալներ

Պատասխանողների (N=198) ժողովրդագրական պատկերը հետևյալն է.


- հարցման մասնակիցների 51%-ը կին է, 49-ը՝ տղամարդ,
- մասնակիցների մեծամասնությունը՝ 66%-ն աշխատում է, 15%-ը չի աշխատում, 11%-ը թոշակառու, իսկ 7%-ն ուսանող է,
- պատասխանողների կեսից ավելին՝ 55%-ն ունի բարձրագույն կրթություն, 27%-ը՝ միջին մասնագիտական կրթություն, իսկ 18%-ը՝ միջնակարգ կրթություն,
- մասնակիցների 95%-ը բնակվում է 2-5 անձից բաղկացած ընտանիքներում,
- հարցվածների 42%-ը 18-35 տարեկան է, 33%-ը՝ 36-55, իսկ 25%-ը՝ 56 և բարձր:

Երկչափ վերլուծություններ

Մույն հետազոտության շրջանակներում անցկացված հարցման տվյալների հիման վրա իրականացվել է երկչափ վերլուծություն՝ հասկանալու հարցման տարբեր փոփոխականների հարաբերակցությունը: Մասնավորապես, վերլուծվել է հարցման մասնակիցների սեռի, տարիքի, կրթության մակարդակի և տեսակավորում անելու կամ չանելու միջև կապը:

1) Հարցման մասնակիցների սեռի և թափոններ տեսակավորելու կամ չտեսակավորելու միջև կապը


Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ արական սեռի հարցվածները զգալիորեն քիչ են հակված թափոններ տեսակավորելուն: Հարցմանը մասնակցած տղամարդկանցից, որոնք կազմում են ընդհանուր հարցվածների 49%-ը (N=198), միայն 15%-ն է տեսակավորում թափոնները, մինչդեռ հարցված կանանց դեպքում կեսից ավելին (52%) տեսակավորում է թափոնները (տե՛ս Պատկեր 9):



Պատկեր 9

2) Հարցման մասնակիցների կրթության մակարդակի և թափոններ տեսակավորելու կամ չտեսակավորելու միջև կապը


Երկչափ վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ միջին մասնագիտական և միջնակարգ կրթություն ունեցող հարցվածների գերակշռող մասը (89%-ից ավելի) չի տեսակավորում թափոնները, մինչդեռ հարցման բարձրագույն կրթություն ունեցող մասնակիցների 54%-ը տեսակավորում է (տե՛ս Պատկեր 10):



Պատկեր 10

3) Հարցման մասնակիցների տարիքի և թափոններ տեսակավորելու կամ չտեսակավորելու միջև կապը


Հարցման մասնակիցների տարիքի և թափոնների տեսակավորման ներկայիս պրակտիկայի երկչափ վերլուծությունը ցույց է տալիս, որ տեսակավորմամբ առավելապես զբաղվում են 18-35 ու 56 և ավելի տարիքի բնակիչները (այդ տարիքային խմբի բնակիչների՝ 40%-ը) (տե՛ս Պատկեր 11):



Պատկեր 11

- 4) Թափոնների տեսակավորման մասին տեղեկատվություն և գիտելիքներ ստանալու նախընտրելի եղանակը՝ ըստ հարցվածների տարիքի

Հարցման արդյունքների հիման վրա նաև վերլուծվել է թափոնների տեսակավորման մասին տեղեկատվություն և գիտելիքներ ստանալու նախընտրելի եղանակը՝ ըստ հարցվածների տարիքի: Երկչափ վերլուծությունը ցույց է տալիս, որ 56 և բարձր տարիք ունեցող հարցվածներն առավելապես նախընտրում են տեղեկատվություն ստանալ հեռուստատեսային հաղորդումների միջոցով (87%): Հարցման 35-55 տարեկան մասնակիցները նախընտրում են ստանալ տեղեկատվություն հեռուստատեսային հաղորդումների (58%), սոցիալական գովազդների (42%) և սոցիալական կայքերի միջոցով (42%), իսկ 18-35 տարեկան մասնակիցները նախապատվություն են տալիս սոցիալական կայքերի միջոցով թափոնների վերաբերյալ տեղեկատվություն ստանալուն (80%) (տե՛ս Պատկեր 12):



Պատկեր 12

Մետատվյալներ

Երևանի բնակիչների հետ անցկացված հարցազրույցների արդյունքում նաև հավաքվել են մետատվյալներ, որոնց հիմքում հարցվածների պատասխանների, տրամադրվածության, թեմայի հանդեպ վերաբերմունքի և հասարակության մեջ ձևավորված կարծրատիպերի դիտարկումներն են:

Մասնավորապես, հարցմանը մասնակցած կանայք ավելի մեծ ներգրավվածություն ունեին և երկար էին մտածում հարցերի շուրջ: Վերջիններս նաև ավելի բաց էին թափոնների տեսակավորման մասին գիտելիքներ ստանալու և տեսակավորումն առօրյայի մաս դարձնելու հարցում: Հակադարձ կերպով, հարցմանը մասնակցած տղամարդիկ ավելի անտարբեր էին վերաբերվում հարցմանը և խուսափում էին բոլոր հարցերին պատասխանելուց:

Ստացված տվյալներից մեկն այն է, որ 18-35 տարեկան արական սեռի ներկայացուցիչները թափոնների տեսակավորումը համարում են կանանց պարտականությունը, անտեղյակ են տեսակավորման նպատակներից և անտարբեր են այն հանգամանքի նկատմամբ, թե ինչ է լինում ապրանքների թափոնների հետ՝ դրանք սպառելուց հետո:

Միևնույն ժամանակ, հարցմանը մասնակցած 36-55 տարեկան տղամարդկանց մոտ պատկերն այլ է, քանի որ վերջիններս ավելի հակված են մասնակցելու համայնքային աշխատանքներին և թափոնների, աղբի կառավարմանը վերաբերող գործողություններին: Նշված խումբն ավելի հակված է թափոններ տեսակավորելուն՝ հաշվի առնելով համայնքի, շրջակայքի համար մտահոգությունները և շրջակայքի մաքրության պատվաբեր լինելը:

Հարցումների ընթացքում արված դիտարկումները նաև ցույց են տվել, որ սոցիալական նորմի հաստատումը և բոլորի կողմից թափոնների տեսակավորումը մեծ դեր ունեն բնակիչների՝ թափոնների տեսակավորման վարքագծի ձևավորման վրա: Այս առումով, հարցվածների մի մասը նշում է, որ չեն տեսակավորում թափոնները, քանի որ «ուրիշներն էլ չեն անում» կամ «չեն հավատում, որ մեկ մարդու տեսակավորումից որևէ բան կփոխվի»:

Մեկ այլ դիտարկում, որը նաև արտահայտվել է հարցման արդյունքներում, տեսակավորման վերաբերյալ գիտելիքների պակասն է: Հարցվածներից շատերը շեշտում են, որ կուզենային ավելին իմանալ թափոնների տեսակավորման մասին: Տեղեկացվածության ցածր մակարդակի մասին է վկայում նաև այն փաստը, որ որոշ հարցվածների դեպքում անհրաժեշտություն է եղել նախքան հարցում սկսելը բացատրել, թե ինչ է իրենից ներկայացնում թափոնների տեսակավորումը:

Հարցումների ընթացքում արված դիտարկումներից մեկն էլ վերաբերում է հարմարությանը: Մասնավորապես, որոշ բնակիչներ տեսակավորման գործընթացն անհարմար և ժամանակատար են համարում. նրանց համար ավելի հեշտ է օգտվել խառը աղբի համար նախատեսված աղբամաններից, քան տանը կազմակերպել տեսակավորում և թափոնները դնել թափոնամաններում: Միևնույն ժամանակ, բնակչության տարածքին մոտ թափոնամանի առկայությունը շատերի համար տեսակավորման շարժիչ գործոն է:

Շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկվածությունը և խնդրի հանդեպ վերաբերմունքը տարբեր վարչական շրջաններում տարբեր են: Մասնավորապես, Քանաքեռ-Զեյթուն և Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանների բնակիչները համեմատաբար ավելի դժվար են ընկալում թափոնների տեսակավորման կարևորությունը: Շատերը չեն ցանկանում տեսակավորել թափոնները՝ պատճառաբանելով, որ «պետք է թափոն ունենանք, որ տեսակավորենք» կամ «մենք արդեն իսկ շատ խնդիրներ ունենք, միայն թափոնների տեսակավորումն էր պակաս»:

Որոշ հարցվածների համար մոտակայքում թափոնամանների առկայությունը դեր չի խաղում, քանի որ վերջիններս տեսակավորումն անկարևոր, երկրորդական գործողություն են համարում:

Մյուս կողմից, Շենգավիթ վարչական շրջանում հարցվածներն ավելի դրական են տրամադրված թափոնների տեսակավորմանը և մտահոգվում են շրջակա միջավայրի պահպանությամբ: Հարցված կանանցից շատերը շեշտում են, որ իրենց ընտանիքի անդամները ևս փորձում են որդեգրել տեսակավորման մշակույթը:

Հետաքրքրական է նաև նշել հարցվածների պատասխանների և վարքագծի միջև եղած հակասությունները: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հասցեներից մեկը շատ աղտոտված է եղել պլաստիկ շշերով: Չնայած դրան՝ այդ հասցեի բոլոր հարցվածները նշել են, որ շրջակա միջավայրի պահպանությունը յուրաքանչյուրի պատասխանատվությունն է:

Հարցազրույցներ

Երևանի բնակիչների հետ թափոնների տեսակավորման վերաբերյալ տարված աշխատանքների մասին տեղեկություններ ստանալու նպատակով սույն հետազոտության շրջանակներում հարցազրույցներ են անցկացվել գործող և ակտիվ կազմակերպությունների, ինչպես նաև ոլորտի փորձագետների հետ:

Հաշվի առնելով «Էկոադր» ՀԿ-ի գործունեությունը և անմիջական աշխատանքը բնակիչների հետ՝ հարցազրույց է անցկացվել ՀԿ-ի համահիմնադիր Հոփսիմե Մկրտչյանի հետ: Կամավոր կերպով պարբերաբար կազմակերպված թափոնների հավաքի արդյունքում ՀԿ-ին է միացել 2000-ից ավելի ընտանիք, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել թափոնների հավաքին:

Հարցազրույցի արդյունքներից պարզ է դառնում, որ բնակիչներին մոտիվացնելու և իրազեկելու համար ՀԿ-ի հիմնական լծակը սոցիալական մեդիայի օգտագործումն է: Մասնավորապես, բնակիչներին մոտիվացրել են ոչ միայն տեղեկատվական հրապարակումները, այլև տեսակավորած թափոնների վերամշակման և դրանցից նոր ապրանքների ստեղծման գործընթացների և պրակտիկ օրինակների ցուցադրումը:

Ըստ փորձագետի՝ բնակիչների կողմից թափոնների տեսակավորումն ապահովող հաջողված մոդելի հիմքում են հետևյալ առանցքային գործոնները՝

- 1) հարմարությունների ստեղծում (բնակավայրին մոտ),
- 2) պատշաճ ապաստարկում (նույն պարբերականությամբ և ժամանակին տեսակավորված թափոնների հեռացում և մաքրության ապահովում, ինչը նպաստում է թե՛ գործընթացի հանդեպ վստահության բարձրացմանը, թե՛ բնակիչների կողմից սովորության ձևավորմանը և պահպանմանը),
- 3) հետևողական կրթում և իրազեկում (նախընտրելի և լավագույնը գործող իրազեկման հարթակների միջոցով),
- 4) կարգապահություն (discipline) կամ սովորության ձևավորում բնակիչների շրջանում, ինչի արդյունքում ձևավորվել է թափոնների հավաքների կազմակերպման հանրային պահանջ,
- 5) մեխանիզմի հանդեպ վստահության ձևավորում և պահպանում (մատչելի, հետևողական և մանրամասն կերպով տեսակավորված թափոնների հետագա փուլերի մասին տեղեկատվության տրամադրում և վերամշակված թափոններից ստացված իրերի ներկայացում):

«Էկոադր» ՀԿ-ի ներկայացուցիչը ոլորտի փորձագետ Արգիշտի Դարբինյանն է, որը նաև ներգրավված է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի Թափոնների տեսակավորման վարչության աշխատանքներում: Վերջինիս ամենօրյա աշխատանքն առնչվում է տեղադրված թափոնամանների և բնակիչների տեսակավորման պատկերի մշտադիտարկմանը: Համաձայն արված դիտարկումների՝ փորձագետը նշում է, որ ամիս առ ամիս նկատվում է թափոնամաններից օգտվող բնակիչների աճ: Երևանում թափոնների տեսակավորման աշխատանքների կազմակերպման հիմնական խոչընդոտներից են՝ համապատասխան ծառայությունների անբավարարությունը, ինչը պայմանավորված է մարդկային և տեխնիկական ռեսուրսների սակավությամբ, իրազեկվածության ցածր մակարդակը, մշտադիտարկման և վերահսկողության մեխանիզմների անբավարար լինելը, խթանների բացակայությունը, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների պակասը, որոնք իրենց մեջ կներառեն նաև վարչական տուգանքներ ոչ պատշաճ տեսակավորման համար:

Փորձագետի համոզմամբ, ներկայումս Երևանում տեղադրված թափոնամանների քանակը շատ չէ, քանի որ ծրագիրը դեռևս պիլոտային փուլում է: Միևնույն ժամանակ, բնակիչների տեսակավորման պրակտիկայի վրա դրական կերպով է ազդում տեղադրված որոշ թափոնամանների տեղափոխությունը (օրինակ՝ բակային տարածքից փողոց) և այդպիսով՝ վերջիններիս տեսանելիության և տեղադիրքի հարմարության ապահովումը:

Փորձագետը նաև կարևորում է վերամշակված թափոններից ստացված տնտեսական օգուտների շեշտադրումը: Իրազեկման արշավները պետք է ներառեն նաև տնտեսական օգուտների բաղադրիչը և ցույց տան վերամշակված թափոններից ապրանքներ, որոնք ներկրված ապրանքներին փոխարինելու մեծ ներուժ ունեն: Ըստ փորձագետի՝ թափոնների տեսակավորման գործընթացի թափանցիկության բարձրացմանը կարող է նպաստել թափոնների վերամշակման գործարանների աշխատանքի և ստացված արդյունքների ներկայացումը:

Ոլորտում գործող ակտիվ կազմակերպություններից է «Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» ՀԿ-ն, որն իր գործունեությունն սկսել է 2018 թվականից: ՀԿ-ի համահիմնադիր Մխիթար Ավետիսյանը նշում է, որ կազմակերպության գործունեությունն ուղղված է երեք թիրախային խմբերի՝ տնտեսավարողներ, համայնքներ և բնակիչներ: Յուրաքանչյուր թիրախի հետ աշխատանքը պահանջում է տարաբնույթ մոտեցում: Ինչպես նշում է փորձագետը, ՀԿ-ն վերջին տարիների ընթացքում ներգրավել է ավելի քան 500 տնտեսավարողների/բիզնեսների: Վերջիններիս հետ աշխատանքի կազմակերպումն ու համակարգումն ավելի հեշտ է, քանի որ բիզնեսներն արդեն իսկ մոտիվացված են՝ իրենց աշխատակիցների շրջանում ներդնելու տեսակավորման մշակույթը:

Միևնույն ժամանակ, բնակիչների հետ աշխատանքն առավել դժվար և բազմաշերտ է՝ հաշվի առնելով վերջիններիս որոշակի զանգվածի մոտ իրազեկման ցածր մակարդակը և բնության մասին հոգ տանելու ցանկության բացակայությունը:

Ըստ փորձագետի՝ Երևանից դուրս գտնվող համայնքների հետ աշխատանքը ևս բազմաշերտ է և տարբեր: Նախքան համայնքներում թափոնամանների տեղադրումը, ՀԿ-ն աշխատում է համայնքապետարանների հետ և իրազեկման աշխատանքներ է իրականացնում: Կան համայնքներ, որոնք մեծ ոգևորությամբ են ընդունում թափոնների տեսակավորման նախաձեռնությունը:

Ըստ Մխիթար Ավետիսյանի՝ թափոնների տեսակավորման գործընթացի կազմակերպման հիմնական խոչընդոտներն են՝

- 1) վարքագծային/մշակութային գործոնը և իրազեկվածության ցածր մակարդակը,
- 2) ենթակառուցվածքային խնդիրները և, մասնավորապես, Երևանից դուրս թափոնների տեսակավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը,
- 3) օրենսդրական բացերը:

Փորձագետն առավելապես կարևորում է սոցիալական նորմի հաստատումը, ինչը կարող է ձևավորվել սեփական օրինակի միջոցով: Նա համոզված է, որ հասարակության հետ հետևողական աշխատանք պիտի տարվի թափոնների և դրանց տեսակավորման վերաբերյալ առկա կարծրատիպերը կոտրելու համար (թափոնը զետնից բարձրացնելը կամ թափոնները տեսակավորելը ամոթ չէ) և պետք է աշխատել բացառապես պետությունից խնդրի լուծում ակնկալելու մոտեցումը փոխելու և բնության ու երկրի հանդեպ անհատի բարոյական պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ:

Իսկ վարքագծային փոփոխությունների հնարավոր կլինի հասնել լայնածավալ իրազեկման արշավների միջոցով, որոնց ընթացքում հատկապես կկարևորվի երեխաների հետ տարվելիք աշխատանքը, տեսակավորմանը դրող խթանների ներկայացումը, համապատասխան օրենքների սահմանումը, վերահսկողության բարձրացումը և տուգանքների կիրառումը:

Ոլորտի վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու նպատակով հետազոտության շրջանակներում հարցազրույց է անցկացվել Հարություն Ալպետյանի հետ, որը շրջանաձև տնտեսության փորձագետ է և ղեկավարում է ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի թափոնների շուրջ իրականացվող ծրագրերը: Կենտրոնի թափոնների կառավարման ուղղվածության հիմնական գործունեությունը հետազոտությունների և կարողությունների բարձրացման միջոցով ՀՀ Կառավարությանն աջակցելն է: ԿԿԹ ոլորտում իրականացված առանցքային ծրագրերից է Թափոնների քանակի և բաղադրության ուսումնասիրությունը, որն իրականացվել է ՀՀ Կառավարության հետ համատեղ՝ ՀԱՀ Մանուկյան Սիմոն հետազոտական հիմնադրամի ֆինանսավորմամբ: Մեկ այլ կարևոր ծրագիր ուղղված է ԿԿԹ տեղական կառավարման պլանավորման ուղեցույցի մշակմանը և ուղեցույցները կիրառելու համար տեղական կառավարման մարմինների վերապատրաստման կարիքների գնահատմանը:

Ներկա պահին կենտրոնի ծրագրերից մեկն ուղղված է Հայաստանում պատասխանատու սպառման և արտադրության խթանմանը: Շվեդիայի միջազգային համագործակցության զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող այս ծրագրի առանցքային շահագրգիռ կողմերն են պետական մարմինները, ձեռնարկությունները և ՔՀԿ-ները: Ծրագրի նպատակն է աշխատանքներ տանել բիզնեսների և ՔՀԿ-ների հետ, որոնք էլ արդյունքում անմիջական կերպով կաշխատեն տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ:

Ի թիվս այլ նպատակների՝ ծրագիրը նախատեսում է ձեռնարկություններից, վերամշակող կազմակերպություններից և ՔՀԿ-ներից կազմված սոցիալապես կամ ոչ ֆորմալ ցանցի ստեղծում, ինչը կնպաստի ԿԿԹ կառավարման համակարգի բարելավմանը:

Փորձագետը նշում է, որ բնակչության համար համակարգի տեսանելիության բարձրացմանն ուղղված քայլերից է համայնքապետարաններին տեխնիկական աջակցություն ցուցաբերելը՝ բնակիչների համար տեսակավորած թափոնների հանձնման կետեր (Civil Amenity Sites) ստեղծելու հարցում:

Իրազեկման աշխատանքների համար, ինչպես նշում է փորձագետը, մեծ դեր ունեն ՔՀԿ-ները, ձեռնարկությունները և վերամշակող կազմակերպությունները, որոնք ինքնին շահագրգռված են համակարգի բարելավման մեջ:

Փորձագետը նաև շեշտում է տեսակավորված թափոնների հավաքի գործընթացում ոչ ֆորմալ սեկտորի առկայությունը և կարևորում վերջինիս ներգրավումը գործընթացի բարելավման մեջ:

Հիմնական եզրակացություններ

Թափոնների տեսակավորման գործելակերպերը, տեսակավորման վրա ազդող հիմնական գործոնները, մոտիվացիոն գործոնները և խոչընդոտները

Առհասարակ, թե՛ ուսումնասիրված գրականությունը, և թե՛ կատարված քանակական հետազոտությունը վկայում են, որ մարդկանց՝ տեսակավորման և վերամշակման վարքագծի վրա ազդող գործոնները շատ բազմազան են:

Տեսակավորման վարքագիծը կախված է թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոններից, որոնք տարբեր են երկրից երկիր և հասարակությունից հասարակություն: Սակայն հնարավոր է դուրս բերել ընդհանրական մի պատկեր, որտեղ կան որոշակի օրինաչափություններ և կարևոր սկզբունքներ, որոնք պետք է օգտագործվեն տեսակավորման և վերամշակման մեխանիզմների ներդրման ժամանակ:

Ըստ հարցման արդյունքների՝ հարցման մասնակիցների 66%-ը չի տեսակավորում թափոնները (N=131), 34%-ը տեսակավորում է: Թափոնների տեսակավորման և սոցիոդեմոգրաֆիկ փոփոխականների միջև, ինչպիսիք են հարցվածների սեռը, տարիքը, կրթության մակարդակը, առկա է համահարաբերակցություն (կորելացիա):

Այսպես, արական սեռի հարցվածները զգալիորեն քիչ են հակված թափոններ տեսակավորելու: Հարցմանը մասնակցած տղամարդկանցից, որոնք կազմում են ընդհանուր հարցվածների 49%-ը (N=198), միայն 15%-ն է տեսակավորում թափոնները, մինչդեռ հարցված կանանց դեպքում՝ կեսից ավելին (52%-ը) տեսակավորում է թափոնները: Այս արդյունքը համապատասխանում է նաև հարցման ընթացքում արված դիտարկումներին:

Հարցման մասնակիցների տարիքի և թափոնների տեսակավորման ներկայիս պրակտիկայի երկչափ վերլուծությունը ցույց է տալիս, որ տեսակավորմամբ առավելապես զբաղվում են 18-35 և 56 և բարձր տարիքի բնակիչները (այդ տարիքային խմբի հարցվածների 40%-ը): Հարկ է նշել, որ առավել հաճախ տեսակավորմամբ զբաղվում են 56 և բարձր տարիք ունեցող մարդիկ (22%, N=49): Այս պատկերը առկա է նաև շատ այլ հետազոտություններում:

Երկչափ վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ միջին մասնագիտական և միջնակարգ կրթություն ունեցող հարցվածների գերակշռող մասը (89%-ից ավելի) թափոնները չի տեսակավորում: Մինչդեռ հարցման բարձրագույն կրթություն ունեցող մասնակիցների կեսից ավելին՝ 54%-ը, տեսակավորում է:

Հարցման մասնակիցներին առաջարկվել է նշել առավելագույնը երեք պատասխան այն հարցին, թե որ հիմնական գործոններն են խանգարում տեսակավորել թափոնները: Չտեսակավորողների (N=131) 48%-ը պատասխանել է, որ չգիտի՝ ինչը և ինչպես տեսակավորել: 31%-ը պատասխանել է, որ մեկ մարդու տեսակավորումից որևէ բան չի փոխվի, իսկ 19%-ի կարծիքով՝ տեսակավորումը ժամանակատար է: Այլ պատասխաններից են՝ տանը տեսակավորման համար հարմար տարածք չունենալը, մոտակայքում թափոնամանների բացակայությունը և վստահություն չունենալը, որ համապատասխան մարմինները տեսակավորված թափոնները վերամշակման կհանձնեն: Հարցման մասնակիցները, որպես խանգարող հանգամանք, նաև նշում են սոցիալական նորմի բացակայությունը և սովորություն չունենալը:

Միևնույն ժամանակ, հարցին, թե որ երեք հիմնական գործոններն են, առհասարակ, բարդացնում թափոնների տեսակավորումը, տեսակավորողների 45%-ը պատասխանել է, որ վստահ չէ՝ համապատասխան մարմինները տեսակավորված թափոնները կհանձնեն վերամշակման: 19%-ը

նշում է մոտակայքում թափոնամանների բացակայությունը, իսկ 7%-ը հայտնել է, որ չի կարծում, թե մեկ մարդու տեսակավորումից որևէ բան կփոխվի:

Հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակների կողմից վեր են հանվել մի քանի առանցքային գործոններ, որոնք դրական կամ բացասական կերպով ազդում են մարդկանց թափոնների տեսակավորման վարքագծի վրա: Դրանք են՝

- 1) տեսակավորում իրականացնելու հարմարությունը (կամ մատչելիությունը),
- 2) տեսակավորման մասին գիտելիքները,
- 3) արժեհամակարգը (կամ մոտիվացիան):

Հարմարությունը (կամ մատչելիությունը) վերաբերում է նրան, թե որքանով է հեշտ բնակչի համար տեսակավորել թափոնները և ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսիք են բնակության վայրի հեռավորությունը տեսակավորման թափոնամաններից, տարաների հարմարավետությունը և դիզայնը, ժամանակը, որը կպահանջվի գործողությունն իրականացնելու համար և ենթակառուցվածքներին վերաբերող այլ խնդիրներ: Հարցման մասնակից՝ տեսակավորում իրականացնողների (N=67) **գերակշիռ մասը՝ 80%-ը**, նշում է բնակության վայրի հարևանությամբ տեսակավորման թափոնամանների առկայությունը՝ որպես տեսակավորմանը մոտիվացնող գործոն: Բացի այդ, նույն տեսակավորում անողների **43%-ը** նշում է, որ սկսել է տեսակավորել, հենց նկատել է տեսակավորման թափոնամանները:

Կարճ հեռավորությունը թափոնամաններից ակնհայտ պարզեցնում է տեսակավորման գործընթացը, ինչն ապացուցվել է մի շարք երկրներում (Bernstad, 2014): Թափոնամանների դիզայնը՝ մասնավորապես դրանց բարձրությունը կամ թափոնը գցելու անցքը, նույնպես կարող են ազդեցություն ունենալ տեսակավորման վարքագծի վրա՝ հատկապես ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց կամ տարեցների դեպքում: Ընդհանուր հարցվածների **34%-ը** համարում է, որ քաղաքում չկա բավարար քանակի տեսակավորման թափոնաման, իսկ **53%-ը** դժվարանում է պատասխանել: Հարցմանը մասնակցած որոշ տեսակավորողներ նաև նշում են, որ քաղաքում տեղադրված թափոնամանները և դրանց բռնակներն անհարմար են:

Հարցման մասնակիցների մեծամասնությունը (**67%**) թափոնների ոչ պատշաճ տեսակավորումը և վերամշակման ցածր մակարդակը համարում են ոչ առաջնահերթ խնդիր Հայաստանի համար: Առհասարակ, պրակտիկան ցույց է տալիս, որ մարդիկ հակված չեն զբաղվելու ցածր առաջնահերթություն ունեցող խնդիրներով, առավել ևս, եթե դրանց անդրադառնալն անհարմար է, դժվար կամ ժամանակատար: Հետևաբար, սկզբնաղբյուրում տեսակավորում իրականացնելու համար կարևոր է ապահովել հնարավորինս հարմար պայմաններ:

Տեսակավորման մասին գիտելիքները մեկ այլ գործոն են, որն անմիջականորեն ազդում է մարդկանց տեսակավորման վարքագծի վրա: Հարցման մասնակիցները նշում են ճիշտ տեսակավորման, դրա հետևանքների և օգուտների մասին գիտելիքների ավելացումը՝ որպես տեսակավորման մոտիվացիոն գործոն:

Չտեսակավորողների (N=131) **գրեթե կեսը** նշում են տեսակավորման գիտելիքներ չունենալը՝ որպես չտեսակավորելու հիմնական պատճառ: Հարցվածների **ավելի քան մեկ երրորդը** նշում են տեսակավորման գիտելիքների ավելացումը՝ որպես տեսակավորմանը դրդող խթան:

Հարցվածների միայն **25%-ը** հստակ գիտի, թե որ թափոններն են վերամշակելի և միայն **26%-ը** գիտի, թե ինչպես տեսակավորել վերամշակելի թափոնները: Հարցման մասնակիցների միայն **16%-ը** հստակ գիտի, թե որ թափոններն են վտանգավոր շրջակա միջավայրի և մարդկանց առողջության

համար և միայն **21%**-ը գիտի, թե ինչ ազդեցություն ունի թափոնների ոչ պատշաճ կառավարումը շրջակա միջավայրի վրա: Հարցվածների գերակշիռ մասը՝ **73%**-ը, նշում է, որ հասարակությունը պատշաճ կերպով և պարբերաբար չի տեղեկացվում թափոնների չտեսակավորման բացասական հետևանքների մասին, իսկ **26%**-ը դժվարանում է պատասխանել:

Հարցման մասնակիցների 75%-ը երևե չի սովորել ճիշտ տեսակավորել թափոնները:

Հարցման շատ մասնակիցներ նշում են տեսակավորման վերաբերյալ տեղեկատվական արշավների անցկացման անհրաժեշտության և կարևորության մասին: Մասնավորապես, հարցվածներից մեկը նշում է. «Մինչև մարդկանցից պահանջելը, որ տեսակավորեն, պետք է տեղեկացնել՝ ինչպես է պետք դա անել: Անիմաստ է դնել ամաններն ու սպասել, որ մարդիկ սկսեն տեսակավորել: Ես, օրինակ, ինչպե՞ս պետք է տեղյակ լինեի»:

Երրորդ գործոնը արժեհամակարգային է և ներառում է բնապահպանական արժեքները կամ սեփականության ու պատասխանատվության զգացողությունը շրջապատի նկատմամբ, վստահությունը վերամշակման համակարգի հանդեպ, սոցիալական նորմի հաստատումը և օրենսդրական կարգավորումները:

Որպես տեսակավորման մոտիվացիոն գործոն՝ տեսակավորում իրականացնողների **52%**-ը նշում է իրենց շրջապատող միջավայրի հանդեպ պատասխանատվությունն ու հոգատարությունը, իսկ **32%**-ը՝ կլիմայի փոփոխության հետ կապված բնապահպանական մտահոգությունները:

Միևնույն ժամանակ, տեսակավորողների **45%**-ը և չտեսակավորողների **55%**-ը նշում է համապատասխան օրենքի սահմանումը և կիրարկումը՝ որպես տեսակավորման մոտիվացիոն գործոն:

Հարկ է նշել, որ հարցմանը մասնակից տեսակավորողների **41%**-ը և չտեսակավորողների **46%**-ը շեշտում են, որ սոցիալական նորմի հաստատումը և շրջապատում բոլորի կողմից տեսակավորում իրականացնելը դրական ազդեցություն կունենա տեսակավորման գործելակերպի վրա: Բացի այդ, չտեսակավորողների **30%**-ից ավելին նշում է, որ չի կարծում, թե մեկ մարդու տեսակավորումից որևէ բան կփոխվի: Այս առումով, հարցումների ընթացքում արված դիտարկումներից ևս պարզ է դառնում, որ հարցվածների մի մասը չի տեսակավորում, քանի որ «ուրիշներն էլ դա չեն անում» կամ «չեն հավատում, որ մեկ մարդու տեսակավորումից որևէ բան կփոխվի»:

Հատկանշական է, որ տեսակավորում իրականացնողների **45%**-ը նշում է, որ վերամշակման ընդհանուր գործընթացի նկատմամբ առկա անվստահությունը բարդացնում է տեսակավորում անելը: **32%**-ն էլ նշում է, որ վերամշակման գործընթացի թափանցիկության բարձրացումը կդրդի իրենց ավելի շատ տեսակավորել:

Տեսակավորման վերաբերյալ իրազեկվելու աղբյուրներ և եղանակներ

Հետազոտության խնդիրներից մեկն է հասկանալ թափոնների տեսակավորման վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության մակարդակը և բացահայտել հաղորդակցման այն նախընտրելի աղբյուրներն ու եղանակները, որոնցով վերջիններս ցանկանում են տեղեկացված լինել և ստանալ գիտելիքներ թափոնների ճիշտ տեսակավորման մասին:

Հարցման արդյունքներից և հարցման ընթացքում արված դիտարկումներից պարզ է դառնում, որ տեսակավորման վերաբերյալ գիտելիքների պակասը մեծ դեր ունի տեսակավորման վարքագծի ձևավորման մեջ:

Հատկանշական է, որ հարցմանը մասնակցած տեսակավորողների համար քաղաքապետարանի և այլ կառույցների իրազեկման ծրագրերը դեր չեն ունեցել տեսակավորում իրականացնելու համար: Ինչպես նշվեց, հարցվածների գերակշռող մասը նշում է թափոնների ճիշտ տեսակավորման մասին տեղեկատվական բացերի մասին:

Համաձայն հարցման արդյունքների՝ թափոնների տեսակավորման մասին գիտելիքներ և տեղեկատվություն ստանալու համար նախընտրելի հիմնական **աղբյուրներն են լրատվամիջոցները (95%), աշխատավայրը (23%), քաղաքապետարանը (11%), դպրոցներն ու համալսարանները (8%) և ոլորտում մասնագիտացված կազմակերպությունները (7%):**

Իսկ թափոնների տեսակավորման մասին գիտելիքներ ու տեղեկատվություն ստանալու համար նախընտրելի հիմնական **եղանակներն են հեռուստատեսային հաղորդումները (54%), սոցիալական կայքերում տեղեկատվության տրամադրումը (49%), սոցիալական գովազդները (30%), քաղաքում տեղադրված ցուցանակները (25%) և անմիջապես թափոնամանների մոտ տեղադրված ցուցանակները (23%):**

Վերջաբան և հիմնական շեշտադրումներ

Հայաստանում կոշտ կենցաղային թափոնների կառավարմանը խոչընդոտող խնդիրները բազմաթիվ են: Դրանցից են անբավարար ենթակառուցվածքները, քաղաքականության բացերը և ոչ արդյունավետ իրականացումը, նոր տեխնոլոգիաների բացակայությունը, ինչպես նաև թափոնների կառավարման օգուտների և դրանց չվերամշակումից առաջացած վնասների մասին գիտելիքների և իրազեկվածության ցածր մակարդակը:

Հետազոտության կարևոր արդյունքներից են սոցիալական և ժողովրդագրական գործոնների, ինչպիսիք են տարիքը, կրթությունն ու սեռը և տեսակավորման հաճախականության միջև կապը:

Պարզվում է, որ համեմատաբար բարձր տարիք ունեցող անձինք ավելի ակտիվ են տեսակավորման մեջ, քան երիտասարդները: Նման եզրակացությունը համահունչ է շատ այլ ուսումնասիրությունների եզրակացություններին: Այսպիսով, անհրաժեշտ է խրախուսել երիտասարդներին և դեռահասներին, որպեսզի վերջիններս հետաքրքրվեն և ակտիվորեն ներգրավվեն տեսակավորման և վերամշակման աշխատանքներում:

Ուսումնասիրությունը նաև պարզել է, որ կանայք Հայաստանում զգալիորեն ավելի մեծ մասնակցություն ունեն թափոնների տեսակավորման մեջ: Հետևաբար, կարիք կա աշխատելու նաև այս հարցում գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերը վերացնելու ուղղությամբ և խթանել ու բարձրացնել տղամարդկանց մասնակցությունը տեսակավորման և վերամշակման գործընթացում:

Կրթական ցենզը և իրազեկվածությունը նույնպես կարևոր փոփոխականներ են, ինչը ևս համահունչ է շատ այլ հետազոտությունների արդյունքներին: Որքան ավելի բարձր է անհատի կրթական մակարդակը և իրազեկվածությունը՝ թափոնների պատշաճ կառավարման կարևորության, ճիշտ տեսակավորման մասին, այնքան ավելի բարձր է իր մասնակցությունը սկզբնաղբյուրում թափոնների տեսակավորմանը:

Կարևոր բացահայտում էր նաև վստահության գործոնը: Վերամշակման ընդհանուր գործընթացի հանդեպ առկա ցածր վստահությունը մեծ դեմոտիվատոր է տեսակավորելու համար:

Այս հետազոտության եզրակացություններն ընդհանուր առմամբ համապատասխանում են տարբեր երկրներում արված նմանատիպ հետազոտությունների արդյունքներին: Դրանք ցույց են տալիս, թե որքան կարևոր են բնակիչների հետ իրազեկման և նրանց մասնակցությունը խթանելու աշխատանքները, ինչպես նաև՝ թափոնների վերամշակման ընդհանուր գործընթացի աշխատանքի մասին լիարժեք, պարբերական և թափանցիկ տեղեկատվության տրամադրումը, ինչը կնպաստի վստահության բարձրացմանը:

Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ փորձագետների հետ անցկացված հարցազրույցները և ուսումնասիրված գրականությունը, կարևոր է նշել, որ թափոնների տեսակավորման ոլորտում զգալի փոփոխություններ և արդյունքներ ունենալու համար անհրաժեշտ է համապարփակ մոտեցում թե՛ պետական մարմինների, թե՛ ոչ ֆորմալ սեկտորի, թե՛ գործող մասնավոր կազմակերպությունների և թե՛ յուրաքանչյուր անհատի կողմից: Պարզունակ կլիինի մտածել, որ կան ունիվերսալ մեթոդներ, որոնք կարող են խթանել վերամշակումը: Յուրաքանչյուր երկրում տեսակավորման և վերամշակման իրավիճակը կախված է արտաքին և ներքին մի շարք գործոններից: Այնուամենայնիվ, կան ընդհանուր բնութագրիչներ, որոնք բնորոշ են վերամշակման ցանկացած համակարգի: Եվ անգամ, եթե հնարավոր չէ ներկայացնել կոնկրետ

ուղղորդումներ թափոնների շուրջ տեղի ունեցող իրավիճակի մասով, կան կարևոր սկզբունքներ, որոնց պետք է հետևել վերամշակման համակարգեր ներդնելիս կամ դրանք բարելավելիս:

Նախ և առաջ, տեսակավորումը և վերամշակումը շատ երկրներում՝ ներառյալ Հայաստանում, հասարակության կողմից համարվում են ոչ առաջնահերթ խնդիրներ: Հետևաբար, մարդիկ հակված չեն դրանց բավարար ուշադրության արժանացնել՝ առավել ևս, եթե տեսակավորումը տեխնիկապես բարդ է և անհարմար: Այս առումով, որպես լուծում, կարելի է դիտարկել տեսակավորման թափոնամանների քանակի ավելացումը և դրանց տեղակայումը բնակիչներին հնարավորինս մոտ, որպեսզի տեսակավորումը ժամանակատար չլինի:

Երկրորդը, շատ կարևոր է տեսակավորման մասին ճիշտ գիտելիքներ ունենալը: Անգամ եթե կա տեսակավորելու ցանկություն՝ առանց գիտելիքների, թե ինչը և ինչպես տեսակավորել, գործընթացը պատշաճ կերպով չի ընթանա: Այս համատեքստում անհրաժեշտ է իրականացնել իրազեկման և կրթական լայնածավալ արշավներ, որոնք հատկապես կշեշտադրեն երեխաների և երիտասարդների ներգրավումը և ուղղված կլինեն թափոնների տեսակավորման հետ կապված հասարակության մեջ առկա կարծրատիպերը կոտրելուն, ներառյալ՝ թափոնները որպես աղբ ընկալելը և թափոնների հետ աշխատանքում սեռով պայմանավորված դերերի բաշխումը:

Հաշվի առնելով, որ արշավների իրականացումը կապված է մարդկային և ֆինանսական ռեսուրսների հետ, անհրաժեշտ է օգտագործել հնարավորինս քիչ ծախսատար և միևնույն ժամանակ բնակիչների համար նախընտրելի հաղորդակցման միջոցներ, ինչպիսիք են օրինակ՝ սոցիալական կայքերը: Հայաստանում մինչ օրս իրականացված աշխատանքները և հատկապես «Էկոադր» ՀԿ-ի հաջողված փորձն ապացուցում են, որ սոցիալական կայքերը մարդկանց ներգրավման համար աշխատող և արդյունավետ գործիք են: Ավելին, սոցիալական կայքերում մեծ լսարան և ազդեցություն ունեցող անձանց (influencers) ներգրավումը և վերջիններիս միջոցով տեսակավորման վերաբերյալ տեղեկատվության տարածումը ոչ միայն կնպաստեն իրազեկվածության ընդհանուր մակարդակի բարձրացմանը, այլև սոցիալական նորմի հաստատմանը և բարոյական պատասխանատվության ավելացմանը: Իրազեկման ռազմավարության մշակումը պետք է հիմնվի կոնկրետ նպատակների և թիրախների վրա, որոնք այս դեպքում կարող են ներառել տեսակավորման մակարդակի բարձրացում նախապես սահմանված տոկոսով և ժամկետներում, թափոնների գոյացման կրճատում, տեսակավորման գործընթացի մեջ բնակիչների մասնակցության ավելացում և այլն:

Կարևոր է նաև թիրախային լսարանի առանձնացումը և յուրաքանչյուր լսարանի ուղղությամբ ռազմավարական ուղղությունների մշակումը: Հաշվի առնելով, որ ամբողջ բնակչությանը թիրախավորելու դեպքում առաջանում են շատ բազմազան լսարաններ և խմբեր, անհրաժեշտ է համադրել և կիրառել հաղորդակցման տարբեր աղբյուրներ, եղանակներ ու գործիքներ, որոնք կնպաստեն բնակիչների մոտ աղբը որպես ռեսուրս դիտարկելու վարքագծային փոփոխությունների իրականացմանը, կհանգեցնեն սովորությունների և ընկալման վերափոխմանը: Այստեղ բացի Երևանի քաղաքապետարանից կարևոր դեր ունեն հասարակական կազմակերպությունները և վերամշակող ընկերությունները:

Վերջապես, բնապահպանական խնդիրների վերաբերյալ խորքային պատկերացում կազմելուն և երկրի հանդեպ բարոյական պատասխանատվության բարձրացմանն ուղղված աշխատանքների անհրաժեշտություն կա, ինչը կնպաստի մոտիվացիայի որոշակի մակարդակ սահմանելուն և երկարաժամկետ պահպանելուն: Հետազոտության շրջանակներում արված հարցումները փաստում են, որ վերամշակման գործընթացի արդյունավետ և թափանցիկ լինելու վերաբերյալ կա հանրային անվստահություն: Դրա նվազմանը կարող է օգնել վերամշակման գործընթացի ամբողջ

ցիկլի, այսինքն՝ տեսակավորված թափոնից նոր արժեքի ստացման մասին հասարակությանը պարբերաբար տեղեկացնելը:

Հավելված 1: Հարցաշար. Բնակիչների շրջանում թափոնների տեսակավորման վարքագծի ուսումնասիրում և աջակցում հանրային իրազեկման արշավի մշակմանը

Թափոնների տեսակավորման ներկայիս պրակտիկան

1) Կա՞ն Ձեր բակում տեսակավորման այսպիսի թափոնամաններ:



- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

2) Արդյոք տեսակավորում էք թափոնները (որևէ տեսակի, որևէ վայրում):

- Միշտ
- Հաճախ
- Երբեմն
- Երբեք

Հարցեր միայն թափոնները տեսակավորողներին

1) Ե՞րբ եք սկսել տեսակավորել _____

Տեսակավորում եք

- հիմնականում տանը գոյացած թափոնները,
- հիմնականում այլ վայրում (ոչ տանը՝ աշխատավայրում/դպրոցում/ համալսարանում) գոյացած թափոնները,
- և՛ տանը, և՛ այլ վայրում գոյացած թափոնները,
- դժվարանում եմ պատասխանել:

2) Ի՞նչ եք սովորաբար անում/արել տեսակավորված թափոնների հետ:

Նշե՛ք բոլոր հնարավոր տարբերակները

- Դնում եմ գունավոր թափոնամաններում
- Հանձնում եմ հավաք կազմակերպող որևէ կազմակերպության (Էկոադբ, ԱՊԱԳԱ, ISSD, tapon.am և այլն)
- Հանձնում եմ համապատասխան վայրեր (խանութ, ընդունման կետ)
- Այլ_____

3) Ո՞ր տեսակի թափոններն եք տեսակավորում և դրանց ո՞ր մասը:

	Ընդհանրապես չեմ տեսակավորում	Հիմնականում չեմ տեսակավորում	Հիմնականում տեսակավորում եմ	Ամբողջությամբ տեսակավորում եմ
Պլաստիկ	Կ	Կ	Կ	Կ
Թուղթ	Կ	Կ	Կ	Կ
Ապակի	Կ	Կ	Կ	Կ
Մետաղ	Կ	Կ	Կ	Կ
Օրգանական (սնունդ)	Կ	Կ	Կ	Կ
Հագուստ (հանձնում եմ այլ անձանց)	Կ	Կ	Կ	Կ
Էլեկտրոնային սարքավորումներ (լամպեր, կենցաղային տեխնիկա և այլն)	Կ	Կ	Կ	Կ
Մարտկոցներ	Կ	Կ	Կ	Կ
Այլ	Կ	Կ	Կ	Կ

Թափոնների տեսակավորման վարքագիծը (մոտիվացնող գործոնները, չտեսակավորելու պատճառները)

Հարցեր թափոնները տեսակավորողներին

1) Ի՞նչն է Ձեզ դրդում/մոտիվացնում տեսակավորել թափոնները:

Ընտրե՛ք երեք հիմնական պատճառներ

- Բնակության վայրի հարևանությամբ տեսակավորման թափոնամաններ կան
- Ինձ շրջապատող միջավայրի հանդեպ պատասխանատվություն/հոգատարություն ունեմ
- Սովորություն է
- Իմ շրջապատում թափոններ տեսակավորող այլ անձինք

- Կարծում եմ, որ տեսակավորելը առաջադեմ է և բնորոշ է բարձր կրթական ցենզ ունեցող մարդկանց
- Աշխատավայրում պարտադրում են տեսակավորել
- Քաղաքապետարանի և այլ կառույցների իրազեկման ծրագրերը
- Միրում եմ նոր հմտություններ ձեռք բերել և կատարելագործել իմ կենցաղը
- Կլիմայի փոփոխության հետ կապված/բնապահպանական մտահոգությունները
- Այլ_____

2) Ի՞նչը Ձեզ կդրդի ավելի շատ տեսակավորել թափոնները:

Ընտրե՛ք առավելագույնը երեք պատասխան

- Համապատասխան օրենքի սահմանումը և կիրարկումը
- Միսյալ տեսակավորելու դեպքում տուգանք վճարելը
- Տեսակավորման դիմաց խրախուսական վճարի ստացումը
- Տան մոտակայքում թափոնամանների առկայությունը
- Վերամշակման գործընթացի թափանցիկության բարձրացումը
- Ճիշտ տեսակավորման մասին գիտելիքների ավելացումը
- Տեսակավորման հետ կապված հետևանքների մասին իրազեկվելը
- Տեսակավորման օգուտների մասին իրազեկվելը
- Սոցիալական նորմի հաստատումը. եթե շրջապատում բոլորը տեսակավորեն
- Այլ_____

3) Ո՞ր հիմնական գործոններն են առհասարակ բարդացնում թափոնները տեսակավորելը:

Ընտրե՛ք առավելագույնը երեք պատասխան

- Մոտակայքում թափոնամանների բացակայությունը
- Չգիտեմ ինչ և ինչպես տեսակավորել
- Տանը տեսակավորման համար հարմար տարածք չկա
- Վստահ չեմ, որ համապատասխան մարմինները տեսակավորված թափոնները կհանձնեն վերամշակման
- Տեսակավորելը ժամանակատար է
- Չեմ կարծում, որ մեկ մարդու տեսակավորումից որևէ բան կփոխվի
- Այլ_____

Հարցեր թափոնները չտեսակավորողներին

1) Ո՞ր հիմնական գործոններն են Ձեզ խանգարում տեսակավորել թափոնները

Ընտրե՛ք առավելագույնը երեք պատասխան

- Մոտակայքում թափոնամանների բացակայությունը

- Չգիտեմ ինչ և ինչպես տեսակավորել
- Տանը տեսակավորման համար հարմար տարածք չկա
- Վստահ չեմ, որ համապատասխան մարմինները տեսակավորված թափոնները կհանձնեն վերամշակման
- Տեսակավորելը ժամանակատար է
- Չեմ կարծում, որ մեկ մարդու տեսակավորումից որևէ բան կփոխվի
- Այլ_____

2) Ի՞նչը Ձեզ կդրդի տեսակավորել թափոնները:

Ընտրե՛ք առավելագույնը երեք պատասխան

- Համապատասխան օրենքի սահմանումը և կիրարկումը
- Միսյալ տեսակավորելու դեպքում տուգանք վճարելը
- Տեսակավորման դիմաց խրախուսական վճարի ստացումը
- Տան մոտակայքում թափոնամանների առկայությունը
- Վերամշակման գործընթացի թափանցիկության բարձրացումը
- Ճիշտ տեսակավորման մասին գիտելիքների ավելացումը
- Տեսակավորման հետ կապված հետևանքների մասին իրազեկվելը
- Տեսակավորման օգուտների մասին իրազեկվելը
- Սոցիալական նորմի հաստատումը. եթե շրջապատում բոլորը տեսակավորեն
- Այլ_____

Վերաբերմունքը թափոնների տեսակավորմանը/շրջակա միջավայրի պահպանությանը

1) Ի՞նչ էք կարծում, թափոնների ոչ պատշաճ տեսակավորումը և վերամշակման ցածր մակարդակն առհասարակ խնդի՞ր է Հայաստանի համար:

- Միանշանակ ամենակարևոր խնդիրներից է
- Կարևոր, բայց ոչ առաջնային
- Ընդհանրապես անկարևոր է

2) Որքանո՞վ էք համաձայն ստորև ներկայացած պնդումների հետ:

	Համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Որոշ չափով համաձայն եմ	Ավելի շուտ համաձայն եմ	Համաձայն եմ	Չունեմ պատասխան
Շրջակա միջավայրի պահպանությունը իշխանությունների պարտականությունն	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ

Է

Շրջակա միջավայրի
պահպանությունը
թափոն ստեղծող/
առաջացնող/
արտադրող
կազմակերպության
պարտականությունն
է

Կ Կ Կ Կ Կ Կ

Շրջակա միջավայրի
պահպանությունը
յուրաքանչյուրիս
պատասխանատվությ
ունն է

Կ Կ Կ Կ Կ Կ

3) Որքանո՞վ եք համաձայն ստորև ներկայացած պնդումների հետ:

	Համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Որոշ չափով համաձայն եմ	Ավելի շուտ համաձայն եմ	Համաձայն եմ	Չունեմ պատաս խան
--	-----------------	-------------------------------	---------------------------------	---------------------------------	----------------	------------------------

Գնումներ
կատարելիս
գերադասում եմ գնել
այն ապրանքները,
որոնք կամ որոնց
տարաները
վերամշակելի են

Կ Կ Կ Կ Կ Կ

Գնումներ
կատարելիս
գերադասում եմ գնել
այն ապրանքները,
որոնք թափոն չեն
առաջացնում

Կ Կ Կ Կ Կ Կ

4) Պատրա՞ստ եք վճարել որոշակի ամսական/տարեկան վճար վերամշակման ամբողջական համակարգ ստեղծելու համար:

- Այո
- Ավելի շուտ այո
- Ավելի շուտ ոչ
- Ոչ

5) Որքանո՞վ եք համաձայն ստորև ներկայացված պնդումների հետ:

	Համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Որոշ չափով համաձայն եմ	Ավելի շուտ համաձայն եմ	Համաձայն եմ	Չունեմ պատաս խան
Քաղաքում տեսակավորման համար բավարար քանակի թափոնամաններ կան	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Տեսակավորման թափոնամանները պատշաճ կերպով սպասարկվում են (մաքուր են, լավ վիճակում են, չունեն հոտ)	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Թափոնների հավաքը թափոնամաններից ճիշտ ժամանակին է կատարվում	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Թափոնամաններից ճիշտ օգտվելու նշումները/ցուցումնե րը հեշտ նկատելի են	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Թափոնամանները հարմար են օգտագործելու համար	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ

Թափոնների տեսակավորման վերաբերյալ ներկայիս գիտելիքները և տեղեկատվություն ստանալու նախընտրելի եղանակները

1) Երբևէ սովորե՞լ եք ճիշտ տեսակավորել թափոնները:

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

2) Եթե այո, ապա որտեղի՞ց:

Նշե՛ք առավելագույնը երեք պատասխան

- Համացանցի միջոցով
- Հեռուստատեսային հաղորդումներով
- Ռադիոյի միջոցով

- Սոցիալական մեդիայի միջոցով
- Հարազատների/ընկերների միջոցով
- Դպրոցի/համալսարանի միջոցով
- Աշխատավայրի միջոցով
- Թերթերի, ամսագրերի միջոցով
- Թափոնների կառավարման/հավաքի վերաբերյալ գործունեություն ծավալող որևէ կազմակերպության միջոցով
- Այլ_____

3) Որքանո՞վ էք համաձայն ստորև ներկայացված պնդումների հետ:

	Համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Որոշ չափով համաձայն եմ	Ավելի շուտ համաձայն եմ	Համաձայն եմ	Չունեմ պատաս խան
Ես հստակ գիտեմ, թե որ թափոններն են վերամշակման ենթակա	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ես հստակ գիտեմ, թե ինչպես է պետք տեսակավորել վերամշակելի թափոնները	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ես գիտեմ վերամշակվող և չվերամշակվող պլաստիկի տեսակները	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ես հստակ գիտեմ, թե որ թափոններն են վտանգավոր շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ
Ես գիտեմ, թե ինչ ազդեցություն ունի թափոնների ոչ պատշաճ կառավարումը շրջակա միջավայրի	Կ	Կ	Կ	Կ	Կ	Կ

վրա

4) Կարծում եք՝ հասարակությունը պատշաճ կերպով և պարբերաբար տեղեկացվո՞ւմ է թափոնների չտեսակավորման բացասական հետևանքների մասին:

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

5) Որո՞նք են թափոնների տեսակավորման մասին գիտելիքներ/տեղեկատվություն ստանալու համար Ձեր նախընտրելի աղբյուրները:

Նշե՛ք ատավելագույնը երեք նախընտրելի տարբերակ

- Դպրոցներ և համալսարաններ
- Աշխատավայր
- Քաղաքապետարան
- Ոլորտում մասնագիտացված կազմակերպություն
- Լրատվամիջոցներ
- Այլ_____

6) Որո՞նք են թափոնների տեսակավորման մասին գիտելիքներ/տեղեկատվություն ստանալու համար Ձեր նախընտրելի հիմնական եղանակները:

Նշե՛ք ատավելագույնը երեք նախընտրելի տարբերակ

- Սոցիալական գովազդներ
- Հեռուստատեսային հաղորդումներ
- Ռադիոյի հաղորդումներ
- Քաղաքապետարանի կայքում տեղեկատվության տեղադրում
- Սոցիալական կայքերում տեղեկատվության տրամադրում
- Էլ. նամակի ստացում
- Տեղեկատվական թռուցիկների բաժանում
- Տեղեկատվական պաստառներ՝ փակցված շքամուտքում
- Ցուցանակներ (billboards) քաղաքում
- Ցուցանակներ անմիջապես թափոնամանների մոտ
- Թաղապետարանի կողմից պարբերաբար կազմակերպվող տեղեկատվական հանդիպումներ
- Թափոնների հավաքման հատուկ օրերի սահմանում/անցկացում
- Տարբեր կազմակերպությունների կողմից բաց դասերի/սեմինարների անցկացում
- Ընկերություններում (գործատուի նախաձեռնությամբ) բաց դասերի անցկացում

Այլ_____

Ժողովրդագրական տվյալներ

1) Երևանի ո՞ր վարչական շրջանում եք բնակվում:

- Աջափնյակ
- Ավան
- Արաբկիր
- Դավթաշեն
- Էրեբունի
- Կենտրոն
- Մալաթիա-Սեբաստիա
- Նոր Նորք
- Նորք-Մարաշ
- Նուբարաշեն
- Շենգավիթ
- Քանաքեռ-Զեյթուն

2) Ձեր տարիքը_____

3) Ձեր սեռը_____

4) Ձեր հիմնական զբաղվածությունը

- Ուսանող եմ
- Աշխատում եմ
- Թոշակառու եմ
- Չեմ աշխատում
- Գործազուրկ եմ

5) Ձեր կրթական մակարդակը

- Տարրական կրթություն
- Միջնակարգ կրթություն
- Միջին մասնագիտական կրթություն
- Բարձրագույն կրթություն


6) Նշվածներից ո՞րն է լավագույնս ներկայացնում Ձեր տնային տնտեսության ֆինանսական վիճակը

- Գումարը չի բավականացնում անգամ սնունդ գնելու համար
- Գումարը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար

- Գումարը բավականացնում է սնունդ և հագուստ գնելու համար, բայց այն բավարար չէ թանկարժեք իրեր, օրինակ՝ հեռուստացույց կամ լվացքի մեքենա գնելու համար
 - Մենք կարող ենք մեզ թույլ տալ որոշակի թանկարժեք իրեր գնել (օրինակ՝ հեռուստացույց կամ լվացքի մեքենա)
 - Մենք կարող ենք մեզ թույլ տալ թանկարժեք իրեր գնել, գնալ ամառային հանգստի, մեքենա գնել, բայց չենք կարող բնակարան գնել
 - Մենք կարող ենք նույնիսկ բնակարան գնել
- 7) Ձեր ընտանիքի անդամների քանակը_____
- 8) Ո՞ր հասցեում/տարածքում կցանկանաք տեսնել տեսակավորման թափոնամաններ_____
- 9) Այլ առաջարկներ թափոնների տեսակավորման ներկայիս պրակտիկան բարելավելու վերաբերյալ_____

Հավելված 2: Թափոնամանների քարտեզ

Հետազոտության շրջանակներում պատրաստվել է Երևանում տեսակավորման թափոնամանների տեղակայման քարտեզ, որը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3v7x5Qj>



Գրականություն

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ

<https://greenyerevan.am>

- A-Jalil, E.E., Grant, D.B., Nicholson, J.D., Deutz, P., 2014. *Investigating household recycling behaviour through the interactions between personal and situational factors*, in: Waste Management and the Environment VII. pp. 113–124. <https://doi.org/10.2495/WM140101>
- Andrews, A., Gregoire, M., Rasmussen, H., Witowich, G., 2013. *Comparison of recycling outcomes in three types of recycling collection units*. Waste Management 33, 530–535. <https://doi.org/10.1016/j.wasman.2012.08.018>
- Areprasert, C., Kaharn, J., Inseemeeesak, B., Phasee, P., Khaobang, C., Kuhavichanun, A., Theerarojprateep, P., Siwakosit, W., 2018. *A comparative study on characteristic of locally source-separated and mixed MSW in Bangkok with possibility of material recycling*. Journal of Material Cycles and Waste Management 20, 302–313. <https://doi.org/10.1007/s10163-017-0583-7>
- Barr, S., Gilg, A., Ford, N., 2005. *Defining the multi-dimensional aspects of household waste management: A study of reported behavior in Devon*. Resources, Conservation and Recycling 45, 172–192. <https://doi.org/10.1016/j.resconrec.2004.12.007>
- Bernstad, A., 2014. *Household food waste separation behavior and the importance of convenience*. Waste Management 34, 1317–1323. <https://doi.org/10.1016/j.wasman.2014.03.013>
- Bhate, S., 2005. *An examination of the relative roles played by consumer behaviour settings and levels of involvement in determining environmental behaviour*. Journal of Retailing and Consumer Services, 12(6), pp.419–429. <https://doi.org/10.1016/j.jretconser.2005.01.002>
- Biel, A., Thøgersen, J., 2007. *Activation of social norms in social dilemmas: A review of the evidence and reflections on the implications for environmental behaviour*. Journal of Economic Psychology 28, 93–112. <https://doi.org/10.1016/j.joep.2006.03.003>
- Biswas, A., Licata, J.W., McKee, D., Pullig, C., Daughtridge, C., 2000. *The Recycling Cycle: An Empirical Examination of Consumer Waste Recycling and Recycling Shopping Behaviors*. Journal of Public Policy & Marketing 19, 93–105. <https://doi.org/10.1509/jppm.19.1.93.16950>
- Chen, F., Chen, H., Guo, D., Han, S., Long, R., 2018. *How to achieve a cooperative mechanism of MSW source separation among individuals — An analysis based on evolutionary game theory*. Journal of Cleaner Production 195, 521–531. <https://doi.org/10.1016/j.jclepro.2018.05.226>
- Cherrett, T.J., Maynard, S., McLeod, F.N., Hickford, A.J., 2012. *Reverse logistics for the management of waste*, in: Green Logistics: Improving the Environmental Sustainability of Logistics. Kogan Page, London, pp. 242–262.
- Corral-Verdugo, V., Frías-Armenta, M., Pérez-Urias, F., Orduña-Cabrera, V., Espinoza-Gallego, N., 2002. *Residential Water Consumption, Motivation for Conserving Water and the Continuing Tragedy of the Commons*. Environmental Management 30, 527–535. <https://doi.org/10.1007/s00267-002-2599-5>
- Desrochers, P., 2002. *Industrial ecology and the rediscovery of inter-firm recycling linkages: historical evidence and policy implications*. Industrial and Corporate Change 11, 1031–1057. <https://doi.org/10.1093/icc/11.5.1031>

- Echegaray, F., Hansstein, F.V., 2017. *Assessing the intention-behavior gap in electronic waste recycling: the case of Brazil*. Journal of Cleaner Production 142, 180–190. <https://doi.org/10.1016/j.jclepro.2016.05.064>
- Heidrich, E.S., Curtis, T.P., Dolfing, J., 2010. *Determination of the Internal Chemical Energy of Wastewater*. Environmental Science & Technology 45, 827–832. <https://doi.org/10.1021/es103058w>
- Jank, A., Müller, W., Schneider, I., Gerke, F., Bockreis, A., 2015. *Waste Separation Press (WSP): A mechanical pretreatment option for organic waste from source separation*. Waste Management 39, 71–77. <https://doi.org/10.1016/j.wasman.2015.02.024>
- Jenkins, R.R., Martinez, S.A., Palmer, K., Podolsky, M.J., 2003. *The determinants of household recycling: a material-specific analysis of recycling program features and unit pricing*. Journal of Environmental Economics and Management 45, 294–318. [https://doi.org/10.1016/S0095-0696\(02\)00054-2](https://doi.org/10.1016/S0095-0696(02)00054-2)
- Johansson, K., 2016. *Understanding recycling behavior: a study of motivational factors behind waste recycling*. WIT Transactions on Ecology and the Environment 202, 401–414. <https://doi.org/10.2495/WM160361>
- Lyas, J.K., Shaw, P.J., van Vugt, M., 2005. *Kerbside recycling in the London Borough of Havering: progress and priorities*. Resources, Conservation and Recycling 45, 1–17. <https://doi.org/10.1016/j.resconrec.2004.12.001>
- McDonough, W., Braungart, M., 2002. *Cradle to Cradle: Remaking the Way We Make Things*, 1st ed. North Point Press, New York.
- McDougall, F.R., White, P.R., Franke, M., Hindle, P., 2001. *Integrated solid waste management: A Life Cycle Inventory*, 2nd ed. Blackwell Publishing Limited, Oxford, UK. <https://doi.org/10.1007/BF02978794>
- Mühle, S., Balsam, I., Cheeseman, C.R., 2010. *Comparison of carbon emissions associated with municipal solid waste management in Germany and the UK*. Resources, Conservation and Recycling 54, 793–801. <https://doi.org/10.1016/j.resconrec.2009.12.009>
- Rathje, W.L., Murphy, C., 2001. *Rubbish!: The Archaeology of Garbage*. University of Arizona Press.
- Saphores, J.D., M., Ogunseitan, O.A., Shapiro, A.A., 2012. *Willingness to engage in a pro-environmental behavior: An analysis of e-waste recycling based on a national survey of US households*. Resources, Conservation and Recycling, 60, pp.49–63. <https://doi.org/10.1016/j.resconrec.2011.12.003>
- Skryhan, H., Shilova, I., Khandogina, O., Abashyna, K., Chernikova, O., 2018. *Waste Management in Post-Soviet Countries: How Far From the EU?* Detritus 03, 193–203. <https://doi.org/10.31025/2611-4135/2018.13657>
- Stern, P.C., Kalof, L., Dietz, T., Guagnano, G.A., 1995. *Values, Beliefs, and Proenvironmental Action: Attitude Formation Toward Emergent Attitude Objects*. Journal of Applied Social Psychology 25, 1611–1636. <https://doi.org/10.1111/j.1559-1816.1995.tb02636.x>
- The World Bank, 2018. *What a waste 2.0. Trends in Solid Waste Management* [WWW Document]. URL <https://datatopics.worldbank.org/what-a-waste/trends-in-solid-waste-management.html>
- Timlett, R.E. and Williams, I.D., 2008. *Public participation and recycling performance in England: A comparison of tools for behaviour change*. Resources, Conservation and Recycling, 52(4), pp.622–634. <https://doi.org/10.1016/j.resconrec.2007.08.003>

- Vassanadumrongdee, S., Kittipongvises, S., 2018. *Factors influencing source separation intention and willingness to pay for improving waste management in Bangkok, Thailand*. Sustainable Environment Research 28, 90–99. <https://doi.org/10.1016/j.serj.2017.11.003>
- Vining, J., Ebreo, A., 1990. *What Makes a Recycler?: A Comparison of Recyclers and Nonrecyclers*. Environment and Behavior 22, 55–73. <https://doi.org/10.1177/0013916590221003>
- Williams, P.T., 2005. *Waste Treatment and Disposal*. John Wiley & Sons, Ltd, Chichester, UK. <https://doi.org/10.1002/0470012668>
- Zhang, D., Keat, T.S., Gersberg, R.M., 2010. *A comparison of municipal solid waste management in Berlin and Singapore*. Waste Management 30, 921–933. <https://doi.org/10.1016/j.wasman.2009.11.017>

Աբստրակտ

Թափոնների տեսակավորումը թափոնների արդյունավետ վերամշակման ապահովման հիմնական նախադրյալն է: Թափոնների վերամշակման և դրանց քանակի նվազեցման ամբողջ գործընթացի արդյունավետ իրականացումը կախված է թափոնների առաջնային տեսակավորումից (waste source separation): Թափոնների տեսակավորման վարքագծի մեխանիզմի ուսումնասիրումը և հստակեցումը կարևոր դեր է խաղում բնակիչների՝ թափոնների տեսակավորման վարքագծի արդյունավետ ուղղորդման և թափոնների վերամշակման բարձր մակարդակի հասնելու համար:

Այս ուսումնասիրության ընթացքում կատարվել է քանակական վերլուծություն և անցկացվել են հարցազրույցներ՝ թափոնների տեսակավորման վարքագծի վրա ազդող գործոնները հասկանալու և տեսակավորելու շարժիչ մեխանիզմներն ուսումնասիրելու համար: Երևան քաղաքի 198 բնակչից հավաքված տվյալների վերլուծության և գրականության ուսումնասիրման միջոցով մշակվել է թափոնների տեսակավորման վարքագծի վրա ազդող գործոնների եռաչափ կառուցվածքը, այն է՝ տեսակավորում իրականացնելու հարմարությունը (կամ մատչելիությունը), տեսակավորման մասին գիտելիքները և արժեհամակարգը (կամ մոտիվացիան), ինչպես նաև դուրս են բերվել Երևան քաղաքի բնակիչների թափոնների տեսակավորման հիմնական շարժիչ գործոնները և ըստ քաղաքացիների՝ տեսակավորմանը խոչընդոտող գլխավոր պատճառները:

Բացի այդ, մշակվել են առաջարկություններ՝ արդյունավետ կերպով ուղղորդելու բնակիչների թափոնների վերամշակման վարքագիծը:

Բանալի բառեր. կոշտ կենցաղային թափոններ, թափոնների տեսակավորում, տեսակավորման մոտիվացնող գործոններ, տեսակավորման խոչընդոտող գործոններ, թափոնների տեսակավորման վարքագիծ

Abstract

Waste sorting is a fundamental prerequisite for efficient waste recycling. The effective implementation of the entire process of municipal solid waste (MSW) recycling and waste reduction depends on the MSW source separation. Examining and understanding the mechanism of waste sorting behavior plays an important role in effectively guiding residents' waste sorting behavior and achieving high levels of waste recycling. In this study, quantitative analysis and interviews were conducted to understand the factors influencing waste sorting behavior and the driving mechanisms of households waste sorting. Through the examination of data collected from 198 residents of the city of Yerevan together with a review of the literature, a three-dimensional structure of factors influencing waste sorting behavior was developed, which is a) sorting convenience; b) sorting knowledge; and c) value system (or motivation). The study also identified the main factors that motivate the residents of Yerevan to sort waste and the main reasons, which, according to residents, constitute barriers to sorting. In addition, recommendations on how to effectively guide residents' waste recycling behavior have been developed.

Keywords: municipal solid waste, waste sorting, motivating factors for waste sorting, hindering factors for waste sorting, waste sorting behavior